

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ,

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ`
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ**

ԵՎ

“ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՀԱՅԱՍՏԱՆ” ՊՈԱԿ-Ի

ՄԻՋԵՎ

26 սեպտեմբերի 2006թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾ I. ՀՄՀ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ..... 3

1.1 Կազմը..... 3

1.2 Քվեարկության իրավունք ունեցող անդամների նշանակումը..... 3

1.3 Կառավարման խորհրդի նախագահի նշանակումը 5

1.4 Դիտորդների նշանակումը..... 5

1.5 Փոխհատուցում և ապահովագրություն 7

1.6 Կառավարման խորհրդի լիազորությունները 8

1.7 Կառավարման խորհրդի նիստերը 12

1.8 Քվորում, քվեարկություն 12

1.9 Որոշումների կայացումը գրավոր համաձայնությամբ 13

1.10 Նիստերի անցկացումը հեռախոսային ժողովի միջոցով 14

1.11 Հաշվետվության պահանջները..... 14

1.12 Վարձատրությունը 14

ՀՈԴՎԱԾ II. ՀՄՀ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ..... 14

2.1 Նշանակումը..... 14

2.2 Կառավարման գրասենյակի լիազորությունները..... 15

2.3 ԳԳՏ-ի դերը 18

2.4 Հաշվետվության պահանջները..... 21

2.5 ՀՄԿ ֆինանսավորման օգտագործման սահմանափակումները..... 21

ՀՈԴՎԱԾ III. ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ..... 24

3.1 Կազմը..... 24

3.2 Դերը և պարտականությունները..... 25

3.3 Նիստերը, որոշումները..... 25

3.4 Հասանելիություն, թափանցիկություն..... 27

ՀՈԴՎԱԾ IV. ՀՄԿ-Ի ԿՈՂՄԻՑ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ԱՅԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 28

4.1 ՀՄԿ-ի կողմից հաստատման իրավունքները..... 28

4.2 ՀՄԿ-ի պատասխանատվության բացառումը..... 28

4.3 ՀՄԿ-ի տեղեկատվական իրավունքները..... 29

4.4 Այլ պարտավորություններ..... 29

4.5 ՀՄՀ-Հայաստանի կողմից հաստատումները..... 29

4.6 Թույլատրելի լիազորված ներկայացուցիչ..... 29

4.7 Աուդիտներ..... 30

ՀՈԴՎԱԾ V. ԺԱՄԿԵՏ, ԿԱՍԵՑՈՒՄ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄ 32

5.1 Ժամկետ 32

5.2 Դադարեցում, կասեցում 32

5.3 Դադարեցման ազդեցությունը..... 33

ՀՈԴՎԱԾ VI. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ 34

6.1 Երաշխավորություններ և հավաստիացումներ 34

6.2 Գաղտնիություն 35

6.3 Հաղորդակցություն 35

6.4 Փոխանցում 37

6.5	Ներկայացուցիչներ	38
6.6	Միջազգային համաձայնագիր	38
6.7	Խորհրդափոխանակություն	38
6.8	ՀՄԿ-ի կարգավիճակը.....	39
6.9	Կողմերի փոխհարաբերությունները.....	39
6.10	Փոփոխում, հրաժարում.....	39
6.11	Իրավական պաշտպանությունից չհրաժարումը.....	40
6.12	Առդիրները	40
6.13	Վերնագրեր	40
6.14	Ամբողջ համաձայնությունը.....	40
6.15	Հավասարազոր օրինակներ, ստորագրություններ	40
6.16	Արգելված գործողություններ	41
6.17	Անգլերեն լեզուն.....	42
6.18	Մեկնաբանումը.....	42

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Սույն **ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ** (այսուհետ՝ «Կառավարման **Համաձայնագիրը**») կնքվում է

2006թ. սեպտեմբերի 26-ին (**Ուժի մեջ մտնելու ամսաթիվ**) Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության Հազարամյակի Մարտահրավեր կորպորացիայի (**ՀՄԿ**), Հայաստանի Հանրապետության Կառավարության անունից գործող՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության աշխատակազմի (**Նախարարություն**) և Կառավարության 2006թ. ապրիլի 13-ի թիվ 487-Ն և դրա փոփոխության մասին 2006թ. հուլիսի 6-ն թիվ 1008-Ն որոշման համաձայն ստեղծված «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ Հայաստան» պետական ոչ առևտրային կազմակերպության (**ՀՄՀ-Հայաստան**) միջև: ՀՄԿ-ն, Նախարարությունը և ՀՄՀ-Հայաստանը սույն Կառավարման Համաձայնագրում առանձին-առանձին անվանվում են **«Կողմ»**, իսկ հավաքաբար՝ **«Կողմեր»**:

Մեծատառով գրված տերմինները, որոնք օգտագործված են սույն Կառավարման Համաձայնագրում, սակայն չեն տրված դրանց սահմանումները (այդ թվում՝ կցվող Ա առդիրում), ունեն այն իմաստը, որը դրանց տրվել է Ամերիկայի Միացյալ Նահանգների (հանձինս ՀՄԿ-ի) և Հայաստանի Հանրապետության Կառավարության («Կառավարություն») միջև 2006թ. մարտի 27-ին Ամերիկայի Միացյալ Նահանգների Գոլումբիա շրջանի Վաշինգտոն քաղաքում ստորագրված Հազարամյակի Մարտահրավեր համաձայնագրում (այսուհետ՝ **«Համաձայնագիր»**):

ՆԵՐԱԾԱԿԱՆ

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, ՈՐ Ամերիկայի Միացյալ Նահանգները՝ գործելով ՀՄԿ-ի միջոցով, և Կառավարությունը կնքել են Համաձայնագիր, որով նախատեսվում են այն ընդհանուր դրույթները և պայմանները, որոնց համաձայն ՀՄԿ-ն մինչև **236,650,000 ԱՄՆ** դոլարի ֆինանսավորում է տրամադրելու Կառավարությանը՝ Հայաստանում տնտեսական աճի և աղքատության կրճատման՝ Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամի ծրագրի իրականացման համար,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, ՈՐ որպես Համաձայնագրի շրջանակներում ՀՄԿ-ի առաջին հատկացման նախապայման, Կողմերը պարտավոր են կնքել և հաստատել Կառավարման համաձայնագիր, որով կնախատեսվի ՀՄՀ-Հայաստանի կազմակերպական կառուցվածքը և դրա Կառավարման խորհրդի և Կառավարման գրասենյակի լիազորությունները, իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև Շահառուների խորհրդի կազմավորումը և դերը (յուրաքանչյուրը՝ ստորև նախատեսված կարգով),

ՈՒՍՏԻ ԱՅԺՄ, հաշվի առնելով սույնով տրված փոխադարձ խոստումները և հավաստիացումները, Կողմերը սույնով համաձայնվում հետևյալի մասին:

ՀՈԴՎԱԾ I ՀՄՀ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Բաժին 1.1 **Կազմը:** ՀՄՀ-Հայաստանի Կառավարման խորհուրդը (“**Կառավարման խորհուրդ**”) պետք է կազմված լինի քվեարկության իրավունք ունեցող տասնմեկ (11) անդամներից (“**Քվեարկության իրավունք ունեցող անդամներ**”), գումարած Բնապահպանական դիտորդը, եթե այդպիսին կա, ինչպես նաև ՀՄԿ դիտորդը (Քվեարկության իրավունք ունեցող անդամները, Բնապահպանական դիտորդը և ՀՄԿ դիտորդը միասին սույն Կառավարման Համաձայնագրում անվանվում են “**Անդամներ**”): Անդամների թիվը կարող է ավելացվել կամ կրճատվել Կառավարման խորհրդի որոշմամբ՝ նախապես ստանալով ՀՄԿ-ի գրավոր համաձայնությունը:

Բաժին 1.2 **Քվեարկության իրավունք ունեցող անդամների նշանակումը:**

(ա) Քվեարկության իրավունք ունեցող հետևյալ անդամները (“**Կառավարությունը ներկայացնող անդամները**”) նշանակվում են ՀՀ Վարչապետի կողմից և կարող են փոխարինվել համեմատելի աստիճանի մեկ այլ կառավարական պաշտոնյայով, որը պետք է լինի Ծրագրի գործունեության հետ առնչություն ունեցող որևէ նախարարությունից կամ պետական այլ մարմնից, որի համար պահանջվում է Կառավարության և ՀՄԿ-ի հաստատումը (փոխարինողն այսուհետ կանվանվի Կառավարությունը ներկայացնող անդամ):

- (i) Վարչապետը,
- (ii) Նախագահի տնտեսական հարցերով Գլխավոր խորհրդականը,
- (iii) Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարը,
- (iv) Տրանսպորտի և կապի նախարարը,
- (v) Գյուղատնտեսության նախարարը, և
- (vi) Տարածքային կառավարման նախարարը:

(բ) Որպես Քվեարկելու իրավունք ունեցող անդամներ, Շահառուների խորհրդի կողմից, **3.2(բ)** բաժնով նախատեսված կարգով, նշանակվելու են քաղաքացիական հասարակության հինգ (5) ներկայացուցիչներ (“**Քաղաքացիական հասարակությունը ներկայացնող անդամներ**”):

(գ) Կառավարությունը ներկայացնող յուրաքանչյուր անդամ գործում է ի պաշտոնե՝ որպես կառավարական պաշտոնյա, այլ ոչ՝ անձամբ իր անունից: Եթե

Կառավարությունը ներկայացնող անդամի պաշտոնում հանդես եկող անձը հրաժարական է տալիս կամ հեռացվում կառավարական իր պաշտոնից, ապա Կառավարման խորհրդում նրա պաշտոնը զբաղեցնում է իր կառավարական պաշտոնում նրա իրավահաջորդը կամ, Կառավարության և ՀՄԿ-ի համաձայնությամբ, Ծրագրի գործունեությանն առնչվող որևէ նախարարության կամ կառավարական որևէ այլ մարմնի՝ համեմատելի աստիճան ունեցող մեկ այլ կառավարական պաշտոնյա:

(դ) Քաղաքացիական հասարակությունը ներկայացնող յուրաքանչյուր անդամ նշանակվում է մեկ (1) տարի ժամկետով և, այդ կերպ նշանակված ցանկացած անձ կարող է, Շահառուների խորհրդի համաձայնությամբ, կրկին նշանակվել **1.2** և **3.2(բ)** բաժինների համաձայն մեկ կամ մի քանի լրացուցիչ մեկ (1) տարի ժամկետներով: Եթե նշանակումը կատարվում է **1.2(զ)** կետի համաձայն թափուր տեղը լրացնելու նպատակով, ապա Քաղաքացիական հասարակությունը ներկայացնող այդ նոր անդամը նշանակվում է մեկ (1) տարի ժամկետով:

(ե) Եթե Քվեարկելու իրավունք ունեցող անդամն անկարող է մասնակցել Կառավարման խորհրդի նիստին, ապա նա կարող է գրավոր նշանակել փոխարինողի, որը կմասնակցի իր անունից՝ *սակայն պայմանով, որ.* (i) Կառավարությունը ներկայացնող անդամի դեպքում փոխարինողը պետք է լինի այդ անդամի առաջին տեղակալը կամ ունենա համարժեք այլ պաշտոն, և (ii) Քաղաքացիական հասարակությունը ներկայացնող անդամի դեպքում փոխարինողը պետք է հաստատվի Քաղաքացիական հասարակությունը ներկայացնող այլ անդամների ձայների մեծամասնությամբ, և նրա նշանակման մասին գրավոր որոշման մեջ պետք է նշված լինի, թե ինչ ժամկետով է նա նշանակվում:

(զ) Եթե Կառավարությունը ներկայացնող մեկ կամ մի քանի անդամների առնչությամբ ցանկացած ժամանակ առաջանում է թափուր տեղ՝ պայմանավորված մահվան, հաշմանդամության, թոշակի անցնելու, հրաժարականի, հեռացման կամ որևէ այլ պատճառով, ապա Վարչապետն այդ պաշտոնը համալրելու համար առաջադրում է որևէ անձի, իսկ եթե թափուր տեղը ցանկացած ժամանակ առաջացել է Քաղաքացիական հասարակությունը ներկայացնող մեկ կամ մի քանի անդամների առնչությամբ՝ պայմանավորված մահվան, հաշմանդամության, թոշակի անցնելու, հրաժարականի, հեռացման կամ որևէ այլ պատճառով, ապա Շահառուների խորհուրդն ընտրում է իրավահաջորդի՝ **3.2(բ)** բաժնի համաձայն՝ *սակայն պայմանով, որ.*

() Ցանկացած պարագայում, նման կերպ առաջադրում և նշանակում կատարելու համար պետք է նախապես ստանա ՀՄԿ-ի

գրավոր համաձայնությունը և այլ առումներով հետևի **1.1** և **1.2** բաժինների համապատասխան դրույթներին, և

() Եթե այդ կերպ փոխարինվում է Կառավարությունը ներկայացնող անդամը, ապա Կառավարությունը ներկայացնող փոխարինող անդամի պաշտոնավարման ժամկետն ավարտվում է այն ժամանակ, երբ նախկին անդամի պետական պաշտոնը զբաղեցվում է որևէ այլ անձի կողմից, որի դեպքում նրան իր պետական պաշտոնում փոխարինողը դառնում է Կառավարությունը ներկայացնող անդամը, եթե Կառավարությունը և ՀՄԿ-ն այլ կերպ չեն պայմանավորվել:

Բաժին 1.3 Կառավարման խորհրդի նախագահի նշանակումը:

(ա) Կառավարման խորհրդի գործունեությունը կառավարվում է Կառավարման խորհրդի նախագահի (**“Նախագահ”**) կողմից: Որպես առաջին Նախագահ հանդես է գալու Վարչապետը: Նրան հաջորդող յուրաքանչյուր Նախագահ պետք է լինի Քվեարկելու իրավունք ունեցող անդամ, որն ընտրվել է Քվեարկելու իրավունք ունեցող անդամների կողմից՝ նախապես դրա համար ստանալով ՀՄԿ-ի գրավոր համաձայնությունը: Առաջին Նախագահը և նրանից հետո նշված կարգի համաձայն ընտրված յուրաքանչյուր Նախագահ պետք է պաշտոնավարի մեկ (1) տարի ժամկետով: Նախագահը պետք է նախագահի Կառավարման խորհրդի բոլոր նիստերը: Նախագահի և նրա կողմից այդ նպատակով լիազորված փոխարինողի բացակայության դեպքում Քվեարկելու իրավունք ունեցող անդամներն իրենց թվից ներկա գտնվող մեկին ընտրում են որպես տվյալ նիստի նախագահող:

(բ) Կառավարման Համաձայնագրի կամ Համաձայնագրի դրույթների համաձայն Կառավարման խորհրդի կողմից ՀՄԿ-ին տրամադրված բոլոր փաստաթղթերը և հաշվետվությունները պետք է Նախագահի կողմից վավերացվեն՝ որպես. (i) Կառավարման խորհրդի կողմից հաստատված փաստաթղթեր, և (ii) իսկական, ստույգ և լիարժեք փաստաթղթեր:

Բաժին 1.4 Դիտորդների նշանակումը

(ա) Կառավարման խորհրդում Դիտորդները նշանակվում են հետևյալ կարգով.

(i) մեկ (1) ներկայացուցիչ ընտրվում է (և, ժամանակ առ ժամանակ, փոխարինվում) ՀՄԿ-ի կողմից (**“ՀՄԿ դիտորդ”**)՝ սակայն պայմանով, որ ՀՄԿ-ն իրավասու է լիազորել փոխարինող ներկայացուցչի, որպեսզի վերջինս մասնակցի Կառավարման խորհրդի մեկ կամ մի քանի նիստերի, եթե ՀՄԿ-ի դիտորդն անկարող լինի մասնակցել, և

(ii) բնապահպանական կողմնորոշում ունեցող որևէ ՀԿ-ի մեկ (1) ներկայացուցիչ՝ նշանակված Շահառուների խորհրդի կողմից (“**Բնապահպանական դիտորդ**”)՝ սակայն պայմանով, որ եթե Կառավարման խորհրդի կազմում Քաղաքացիական հասարակությունը ներկայացնող անդամներից մեկն արդեն իսկ բնապահպանական կողմնորոշում ունեցող ՀԿ-ի ներկայացուցիչ է, ապա Քաղաքացիական հասարակությունը ներկայացնող այդ անդամը պետք է միաժամանակ հանդես գա նաև որպես Բնապահպանական դիտորդ: Առաջին Բնապահպանական դիտորդը ծառայելու է Ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո անցկացվող՝ Կառավարման խորհրդի առաջին նիստի օրվանից սկսած մեկ (1) տարի ժամկետով, և յուրաքանչյուր անգամ մեկ տարին բոլորելուց հետո Շահառուների խորհուրդը պարտավոր է նշանակել մեկ այլ ներկայացուցիչ՝ որպես հաջորդ տարվա Բնապահպանական դիտորդ: Բնապահպանական դիտորդը կամ, նրա կողմից համապատասխան գործողությունը չկատարելու դեպքում, Շահառուների խորհուրդն իրավասու է առաջադրել բնապահպանական կողմնորոշում ունեցող փոխարինող ներկայացուցիչ, որը կմասնակցի Կառավարման խորհրդի մեկ կամ մի քանի նիստերի, եթե Բնապահպանական դիտորդն անկարող լինի մասնակցել:

(բ) Դիտորդները չեն ունենա Կառավարման խորհրդի կողմից կայացվող որևէ որոշման շուրջ քվեարկելու իրավունք: Եթե սույն Կառավարման Համաձայնագրով այլ կերպ նախատեսված չէ, ապա յուրաքանչյուր Դիտորդ իրավունք կունենա մասնակցել Կառավարման խորհրդի բոլոր նիստերին, մասնակցել Կառավարման խորհրդի քննարկումներին և ստանալ Կառավարման խորհրդին տրամադրվող բոլոր տեղեկությունները և փաստաթղթերը, ինչպես նաև իրականացնել ցանկացած այլ իրավունք (բացառությամբ քվեարկելու իրավունքի), որը սույն Կառավարման Համաձայնագրի համաձայն վերապահված է քվեարկելու իրավունք ունեցող անդամներին, այդ թվում՝ գրառումներին ծանոթանալու, աշխատակիցների ծառայություններից կամ տարածքի հարմարություններից օգտվելու իրավունքները:

(գ) Եվ Կառավարությունը, և ՀՄՀ-Հայաստանը սույնով հրաժարվում են Կառավարման խորհրդում քվեարկելու իրավունք չունեցող դիտորդի կարգավիճակի կապակցությամբ յուրաքանչյուր Դիտորդի գործառույթի կապակցությամբ ծագող որևէ պատասխանատվության կամ այլ պահանջի իրավունքներից: Համաձայնագրի, Կառավարման Համաձայնագրի կամ ՀՄՀ-Հայաստանի գործունեության շրջանակներում կամ առնչությամբ ծագող բոլոր հարցերում ՀՄԿ-ի դիտորդի նկատմամբ, Համաձայնագրի 1-ին հավելվածի 3(դ)(ii)(6) բաժնի համաձայն, չի տարածվում Հայաստանի դատարանների կամ որևէ այլ մարմնի, կամ որևէ արբիտրաժային մարմնի իրավագործությունը, և այդ

համաձայնագրերի կամ գործունեության որևէ տարր չի կարող մեկնաբանվել որպես ՀՄԿ-ի դիտորդի համաձայնություն՝ ընդունելու նման իրավագործություն:

Բաժին 1.5 Փոխհատուցում և ապահովագրություն

(ա) Կառավարությունը պարտավոր է յուրաքանչյուր անդամի, Կառավարման գրասենյակի յուրաքանչյուր ղեկավարի և աշխատակցի երաշխավորել և զերծ պահել որևէ պահանջից, կորուստներից, վարույթներից, պատասխանատվությունից, ծախսերից, վնասներից կամ ծախքերից, ներառյալ՝ իրավաբանների ողջամիտ վճարներից և ծախսերից, որոնք ծագել կամ կատարվել են այդ անդամի կամ Կառավարման գրասենյակի այդ ղեկավարի կամ աշխատակցի կողմից նրա՝ Կառավարման խորհրդի անդամ լինելու կամ Կառավարման գրասենյակում աշխատելու առնչությամբ՝ սակայն պայմանով, որ Կառավարությունը որևէ պարտավորություն չունի՝ զերծ պահելու Քվեարկելու իրավունք ունեցող որևէ անդամի կամ Կառավարման գրասենյակի որևէ ղեկավարի կամ աշխատակցի սույն 1.5 բաժնով նախատեսված պայմաններից, եթե, և այնքանով, որքանով այդ պահանջը, կորուստները, վարույթները, պատասխանատվությունը, ծախսերը, վնասները կամ ծախքերը վերագրվում են Քվեարկելու իրավունք ունեցող այդ անդամի կամ Կառավարման գրասենյակի այդ աշխատակցի կողմից կատարված խարդախության, կոպիտ անփութության կամ գիտակից չարաշահման: Չերծ պահելու իրավունքները, որոնք նախորդ նախադասության համաձայն վերապահված են բոլոր անդամներին և Կառավարման գրասենյակի բոլոր ղեկավարներին կամ աշխատակիցներին, պայմանագրային իրավունքներ են, որոնք, չնայած սույն Կառավարման Համաձայնագրով նախատեսված և դրանց հակասող դրույթներին (ներառյալ՝ 6.10 բաժնով նախատեսված՝ փոփոխությունների մասին դրույթներին), չեն կարող սահմանափակվել առանց այդ իրավունքների շահառուի համաձայնության:

(բ) Կառավարությունը պարտավոր է ապահովել՝ բացառապես իր հաշվին, որպեսզի ձեռք բերվի համապատասխան ապահովագրություն և տրամադրվեն զերծ պահելու առումով հատուցման ու պաշտպանության համապատասխան միջոցներ, որոնք ընդունելի կլինեն ՀՄԿ-ին և թույլ կտան ապահովել, որպեսզի անդամները լիովին զերծ պահվեն իրենց՝ որպես անդամ կատարած գործողությունների կամ բացթողումների հետևանքով առաջացող անձնական պատասխանատվությունից և ստանան հատուցում նման պատասխանատվության դիմաց:

(գ) Կառավարությունը պարտավոր է սույն 1.5 բաժնով նախատեսված իր պարտավորությունները կատարելիս գործել Համաձայնագրի համապատասխան դրույթների, ներառյալ Համաձայնագրի 1-ին հավելվածի 3.9 բաժնի և 3(դ)(ii)(6) բաժնի հիման վրա:

Բաժին 1.6 Կառավարման խորհրդի լիազորությունները: Հաշվի առնելով Համաձայնագրով (այդ թվում՝ Համաձայնագրի 1-ին հավելվածի 3(գ) բաժնով), սույն Կառավարման Համաձայնագրով և համապատասխան Լրացուցիչ համաձայնագրերով նախատեսված՝ ՀՄԿ-ի կողմից հաստատում տալու պայմանագրային իրավունքները, Կառավարման խորհուրդն ունի հետևյալ պարտականությունները և լիազորությունները (որոնք չեն կարող պատվիրակվել).

(ա) Վերահսկողություն.

(i) Կառավարման գրասենյակի նկատմամբ,

(ii) Համաձայնագրի և համապատասխան Լրացուցիչ համաձայնագրերի համաձայն Ծրագրի ընդհանուր իրազորման նկատմամբ, ներառյալ Համաձայնագրի և համապատասխան Լրացուցիչ համաձայնագրերի համաձայն պարբերաբար փոփոխվող Իրազորման պլանի և դրա բոլոր բաղադրիչ պլանների վերահսկողությունը, և

(iii) ՀՄՀ-Հայաստանի (կամ փոխադարձաբար ընդունելի այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, որոնց վերաբերյալ ՀՄԿ-ն տվել է իր գրավոր համաձայնությունը) կողմից Կառավարության Պարտականությունների կամ դրանց մի մասի, կամ Կառավարության որևէ այլ պարտականությունների և պարտավորությունների կատարման նկատմամբ, կամ ՀՄՀ-Հայաստանի կամ որևէ այլ սուբյեկտի կողմից Համաձայնագրով կամ Լրացուցիչ համաձայնագրով նախատեսված՝ Կառավարության իրավունքների իրականացման նկատմամբ, որը ցանկացած դեպքում պետք է իրականացվի Համաձայնագրի 3.2(գ) բաժնի դրույթներին և պայմաններին համապատասխան (բոլորը միասին՝ **“Լիազորված իրավունքներ և պարտականություններ”**):

(բ) Կատարել Համաձայնագրով, սույն Կառավարման Համաձայնագրով, Հայաստանի օրենսդրությամբ և Կանոնադրությամբ (**“Կանոնադրություն”**) նախատեսված այլ պարտականություններ և վերահսկողական գործառույթներ ՀՄՀ-Հայաստանի գործունեության նկատմամբ,

(գ) Չսահմանափակելով սույն 1.6 բաժնի վերոհիշյալ դրույթները, ՀՄՀ-Հայաստանի ստորև թվարկված բոլոր գործողությունների համար ուղղակիորեն անհրաժեշտ է նախապես ստանալ Կառավարման խորհրդի հաստատումը (յուրաքանչյուրը՝ **“Խորհրդի որոշում”**).

() Ցանկացած գործարք, գործունեություն, համաձայնագիր կամ փաստաթուղթ, որի համար Համաձայնագրի կամ Լրացուցիչ համաձայնագրերի համաձայն պահանջվում է ՀՄԿ-ի հաստատումը (ներառյալ

Համաձայնագրի 1-ին հավելվածի 3(գ) պարբերության մեջ նկարագրված գործարքները, գործունեությունը, համաձայնագրերը և փաստաթղթերը),

() Վերահատկացում որևէ Մատակարարի՝ այնքանով, որքանով ՀՄԿ-ն, գրավոր ծանուցելով ՀՄՀ-Հայաստանին և Ֆինանսական գործակալին, կարգադրում է Կառավարման խորհրդին վերանայել և հաստատել այդ Վերահատկացումը,

(iv) Բացառությամբ ստորև՝ (iv) կետով նախատեսված գործունեության և գործողությունների, որևէ համաձայնագրի կնքումը, որը կպարտավորեցնեի ՀՄՀ-Հայաստանին կրել պայմանագրային այնպիսի պարտավորություն, որը հավասար կլինի **100,000** (հարյուր հազար) ԱՄՆ դոլարի կամ կգերազանցեր այդ գումարը, կամ ցանկացած այլ գումար, որը կարող է համաձայնեցվել ՀՄԿ-ի և ՀՄՀ-Հայաստանի միջև, ներառյալ այդպիսի պայմանագրի ցանկացած փոփոխություն, ձևափոխություն, լուծում կամ կասեցում,

(v) Ցանկացած գործունեություն կամ գործողություն, որի համար Գնումային համաձայնագրի համաձայն պահանջվում է Կառավարման խորհրդի հաստատումը,

(vi) ՀՄՀ-Հայաստանի կողմից ՀՄԿ-ին ՀՄԿ-ի որևէ Հատկացման հայտի ներկայացումը (որի հաստատումը պետք է ներառի ՀՄԿ-ի տվյալ Հատկացման հայտի բոլոր հավելվածների հաստատումը և ՀՄԿ-ի տվյալ Հատկացման հայտի, դրա բաժինների վերաբերյալ ղեկավարության քննարկումների և վերլուծությունների հաստատումը),

(vii) (Ա) Իրագործման պլանի (ներառյալ Ֆինանսական պլանը, Գնումային պլանը, Մ և Գ պլանը, Ֆինանսական հաշվետվողականության պլանը և Ծրագրերի և Ենթածրագրերի աշխատանքային պլանները) հաստատումը, (Բ) Աուդիտի պլանների և Աուդիտի պլանի մեջ նշված՝ որևէ աուդիտի վերաբերյալ արձագանքների հաստատումը, (Գ) կադրային համալրման պլանների հաստատումը, և (Դ) 1.6(գ)(vi)(Ա)-(Գ) կետերում նկարագրվածներից որևէ մեկի որևէ փոփոխության, ձևափոխության կամ լրացման հաստատումը,

(viii) Որևէ Լրացուցիչ համաձայնագրի կնքումը, ներառյալ դրա որևէ փոփոխություն, ձևափոխություն, լրացում կամ կասեցում, ինչպես նաև ցանկացած գործողություն, որի հետևանքով կփոփոխվեր, փոխարինվեր, լուծվեր կամ կասեցվեր որևէ Լրացուցիչ համաձայնագիր, որին կողմ է ՀՄՀ-Հայաստանը,

(ix) Որևէ առաջարկ (կամ գործողություն), որով փոփոխվում, փոխարինվում, լուծվում, կասեցվում կամ այլ կերպ փոփոխվում է Խորհրդի որևէ որոշում կամ Կառավարման խորհրդի կողմից նախկինում կայացված որևէ որոշում,

(x) ԳԳՏ-ի աշխատանքի (այդ թվում՝ վարձատրության) պայմանները և աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև դրանցում կատարված փոփոխությունները,

(xi) Կառավարման գրասենյակի ղեկավարների (բացառությամբ ԳԳՏ-ի) աշխատանքի ընդունումը և աշխատանքից ազատումը, ինչպես նաև ՀՄՀ-Հայաստանի կողմից որևէ աշխատակցի, խորհրդատուի կամ փորձագետի աշխատանքի ընդունումը և աշխատանքից ազատումը, որի համախառն ամսական վարձատրությունը գերազանցում է **2,000** (երկու հազար) ԱՄՆ դոլարը, ինչպես նաև այդ անձի աշխատանքի (ներառյալ՝ վարձատրության) համապատասխան դրույթները և աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև դրանցում կատարվող փոփոխությունները,

(xii) Համաձայնագրով, սույն Կառավարման Համաձայնագրով կամ Լրացուցիչ համաձայնագրերով պահանջվող կարգով ՀՄԿ-ին կամ Կառավարությանը ներկայացվելիք հաշվետվությունների, պլանների և այլ փաստաթղթերի վերանայումը և հաստատումը (Կառավարման խորհրդի հաստատումը պետք է ստացվի նախքան այդ հաշվետվությունների, պլանների և փաստաթղթերի ներկայացումը ՀՄԿ-ին կամ Կառավարությանը),

(xiii) Ծրագրի տարբեր բաղադրիչների միջև գումարների բաշխման ճշգրտումը՝ Համաձայնագրի դրույթների (ներառյալ Համաձայնագրի 2-րդ հավելվածի 4-րդ կետի) հիման վրա, նախապես ստանալով ՀՄԿ-ի գրավոր համաձայնությունը՝ *պայմանով, որ* ՀՄՀ-Հայաստանը կարող է առանց ՀՄԿ-ի հաստատման փոփոխել Մանրակրկիտ ֆինանսական պլանը, քանի դեռ.
 (Ա) Համաձայնագրի 2-րդ հավելվածով նախատեսված Բազմամյա ֆինանսական պլանի մեջ նկարագրված միևնույն տողին վերաբերող բոլոր նման փոփոխությունները չեն գերազանցում հետևյալ գումարներից ավելի փոքրը.
 (x) կամ Բազմամյա ֆինանսական պլանի հաստատված ամենաթարմ տարբերակի համապատասխան տողի 10%-ը, կամ (y) \$500,000 ԱՄՆ դոլարը,
 (Բ) այդ փոփոխությունը համահունչ է Նպատակներին, և դրա հետևանքով ՀՄԿ ֆինանսավորման գումարը չի գերազանցում Համաձայնագրի 2.1(ա) բաժնով նախատեսված ընդհանուր գումարը, և (Գ) ՀՄՀ-Հայաստանն անմիջապես ՀՄԿ-ին է ներկայացնում փոփոխված Մանրակրկիտ ֆինանսական պլանը՝ փոփոխված Բազմամյա ֆինանսական պլանի հետ մեկտեղ, որոնք պետք է արտացոլեն համապատասխան փոփոխությունները,

(xiv) Կառավարող Կառավարման խորհրդի անդամների թվի ցանկացած փոփոխություն (ընդ որում, նման փոփոխության համար անհրաժեշտ է նախապես ստանալ ՀՄԿ-ի գրավոր հաստատումը),

(xv) 3.1(ե) բաժնում նկարագրված՝ Շահառուների խորհրդի կազմի ցանկացած ընդլայնում և/կամ փոփոխություն (ընդ որում, նման փոփոխության համար անհրաժեշտ է նախապես ստանալ ՀՄԿ-ի գրավոր հաստատումը),

(xvi) 3.2(զ) բաժնի համաձայն արտահայտված՝ Շահառուների խորհրդի տեսակետների կամ առաջարկությունների քննարկումը, և, եթե Կառավարման խորհուրդը ցանկալի է համարում, ապա՝ պահանջել, որպեսզի Կառավարման գրասենյակը պատասխան տեղեկություններ և փաստաթղթեր տրամադրի Կառավարման խորհրդին կամ, համապատասխան դեպքերում, Շահառուների խորհրդին,

(xvii) Կանոնադրության որևէ փոփոխություն (ընդ որում, յուրաքանչյուր նման փոփոխության համար անհրաժեշտ է նախապես ստանալ ՀՄԿ-ի գրավոր հաստատումը),

(xviii) Ցանկացած որոշում, որը վերաբերում է. (Ա) ՀՄՀ-Հայաստանի վերակազմակերպմանը, (Բ) ՀՄՀ-Հայաստանի լուծարմանը, փակմանը կամ գործունեության դադարեցմանը, կամ (Գ) ՀՄՀ-Հայաստանի իրավակազմակերպական ձևի մեջ որևէ այլ փոփոխությանը՝ *սակայն պայմանով, որ*. (1) յուրաքանչյուր նման որոշման համար կպահանջվի Քվորում ապահովող նիստին ներկա գտնվող, Քվեարկելու իրավունք ունեցող անդամների ձայների յոթանասունհինգ տոկոսի (75%) հաստատումը (*սակայն նաև պայմանով, որ 1.6(զ)(xvi)(Գ) բաժնում նկարագրված փոփոխություն կատարելու համար, որը ոչ էական փոփոխություն է ՀՄՀ-Հայաստանի կազմակերպական կառուցվածքի մեջ, կպահանջվի Կառավարման խորհրդի համաձայնությունը 1.8 բաժնով նախատեսված կարգով*), (2) յուրաքանչյուր նման որոշում չի կարող կայացվել 1.9 բաժնի համաձայն, և (3) յուրաքանչյուր նման որոշում կայացնելու համար պետք է նախապես ստանալ ՀՄԿ-ի գրավոր հաստատումը, և

(xix) Ցանկացած այլ գործունեություն, համաձայնություններ, փաստաթղթեր կամ գործողություններ, որի համար պահանջվում է Կառավարման խորհրդի հաստատումը՝ Համաձայնագրով, սույն Կառավարման Համաձայնագրով կամ համապատասխան Լրացուցիչ համաձայնագրերով նախատեսված կարգով, կամ եթե դա ժամանակ առ ժամանակ պահանջվում է ՀՄԿ-ի կողմից:

Կառավարման խորհուրդը պարտավոր է Խորհրդի ցանկացած նման որոշման մասին ծանուցումը՝ համապատասխան պայմանագրի կամ փաստաթղթի կրկնօրինակի հետ միասին, եթե այդպիսիք կան, առաքել ՀՄԿ-ին, և նման ծանուցումը պետք է վավերացվի Նախագահի կողմից, ընդ որում՝ նման վավերացման մեջ պետք է նշվի, որ դրան կցված համապատասխան պայմանագրերը և փաստաթղթերն իսկական են, ստույգ և լիարժեք:

Բաժին 1.7 Կառավարման խորհրդի նիստերը: Կառավարման խորհրդի հերթական նիստերի անցկացման ժամկետը և վայրը որոշվում են Կառավարման խորհրդի կողմից, սակայն դրանք պետք է գումարվեն առնվազն եռամսյակը մեկ և, եթե անհրաժեշտ է, ապա՝ ավելի հաճախակի: Կառավարման խորհրդի արտահերթ նիստեր կարող են հրավիրվել Նախագահի, ցանկացած երկու անդամի կամ ԳԳՏ-ի պահանջով: Նիստի վայրը, ամսաթիվը, ժամը և օրակարգը պարունակող ծանուցումը պետք է ՀՄՀ-Հայաստանի Քարտուղարի կողմից տրվի յուրաքանչյուր Անդամի. (ա) հերթական եռամսյակային նիստի վերաբերյալ՝ անձամբ, փոստով, կամ ֆաքսիմիլային եղանակով, հերթական եռամսյակային նիստի ամսաթվից առնվազն յոթ (7) օր առաջ, (բ) արտահերթ նիստի վերաբերյալ՝ անձամբ կամ փոստով, արտահերթ նիստի ամսաթվից առնվազն 48 ժամ առաջ, հեռախոսով այդ մասին տեղեկացնելու դեպքում՝ այդ արտահերթ նիստի ամսաթվից առնվազն 24 ժամ առաջ: Չնայած վերոգրյալին. (x) ցանկացած Անդամ կարող է գրավոր հրաժարվել նման նիստի վերաբերյալ ծանուցում ստանալու պահանջ ներկայացնելու իրավունքից, և (y) Անդամի ներկայությունն այդ նիստին հանդիսանում է նիստի վերաբերյալ ծանուցում ստանալու պահանջ ներկայացնելու իրավունքից հրաժարում: Կառավարման խորհրդի վավեր նիստ չի կարող անցկացվել, եթե յուրաքանչյուր Անդամ չի ստացել այդ նիստի ծանուցում (կամ չի հրաժարվել նման ծանուցում պահանջելու իրավունքից): Եթե Կառավարման խորհրդի որևէ նիստ անցկացվում է հայերեն, թարգմանիչ պետք է ապահովվի հայերեն չիտսող ցանկացած Անդամի համար: Կառավարման խորհրդի ցանկացած նիստի ընթացքում քննարկվող բոլոր փաստաթղթերը պետք է թարգմանված լինեն անգլերեն, և բոլոր այդ փաստաթղթերի անգլերեն տարբերակները պետք է տրամադրվեն բոլոր Անդամներին նախքան Կառավարման խորհրդի տվյալ նիստի օրը:

Բաժին 1.8 Քվորում, քվեարկություն:

(ա) Կառավարման խորհրդի բոլոր նիստերի ընթացքում որոշումներ կայացնելու համար քվորում ապահովվում է Քվեարկելու իրավունք ունեցող անդամների մեծամասնությամբ (“**Քվորում**”)՝ սակայն պայմանով, որ այդ մեծամասնությունը պետք է ներառի Քաղաքացիական հասարակությունը ներկայացնող անդամներից առնվազն երկուսին, որպեսզի համարվի, որ Քվորումն ապահովված է: Չնայած նախորդ նախադասությանը, եթե Կառավարման խորհրդի որևէ նիստի ընթացքում Քվորում ապահովված չէ, որից հետո սահմանված կարգի

համաձայն յուրաքանչյուր Անդամի ուղարկվում է ծանուցում (կամ Անդամը հրաժարվում է ծանուցում ստանալու պահանջից), որի մեջ նշված է, որ նիստը նոր օրակարգով վերագումարվելու է սկզբնական նիստից հետո առնվազն յոթ (7) օրացուցային օրվա ընթացքում, ապա այդ երկրորդ նիստի համար Քվորումն ապահովված կլինի, եթե դրան ներկա գտնվի Քվեարկելու իրավունք ունեցող անդամների մեծամասնությունը:

(բ) Բացառությամբ 1.6(գ)(xvii) և 1.9 բաժիններով նախատեսված դեպքերի, նիստին, որում առկա է Քվորում, ներկա գտնվող և Քվեարկելու իրավունք ունեցող անդամների մեծամասնության որոշումը համարվում է Կառավարման խորհրդի որոշում՝ պայմանով, որ որևէ որոշում չի համարվում Կառավարման խորհրդի կողմից կայացված որոշում, եթե դրան կողմ չեն քվեարկել Քվեարկելու իրավունք ունեցող անդամներից առնվազն չորսը (4), այդ թվում՝ Քաղաքացիական հասարակությունը ներկայացնող անդամներից (եթե նրանք ներկա են) առնվազն մեկը: Քվեարկելու իրավունք ունեցող յուրաքանչյուր անդամ ունի մեկ (1) ձայն Կառավարման խորհրդի ցանկացած որոշման շուրջ կայացվող քվեարկության համար: Եթե ձայները հավասար են կիսվում, ապա վճռորոշ կլինի Նախագահի ձայնը: Եթե Կառավարման խորհրդի որևէ նիստում ապահովված չէ Քվորում, ապա ներկա գտնվող Անդամներն իրավասու են հետաձգել նիստը՝ նիստի հայտարարությունից բացի չտալով որևէ այլ ծանուցում, այնքան ժամանակով, մինչև կապահովվի Քվորում: Բացառությամբ 1.9 բաժնով նախատեսված դեպքի, Կառավարման խորհրդի ցանկացած որոշում, ընտրություն, նշանակում կամ գործողություն, որն ուղղակիորեն նախատեսված է սույն Կառավարման Համաձայնագրով կամ ոչ, կայացվելու է սույն 1.8 բաժնով նախատեսված կարգի համաձայն:

Բաժին 1.9 Որոշումների կայացումը գրավոր համաձայնությամբ: Եթե սույն Կառավարման Համաձայնագրով այլ բան նախատեսված չէ, ապա ցանկացած որոշում, որը պետք է կայացվի կամ կարող է կայացվել Կառավարման խորհրդի որևէ նիստի ընթացքում, կարող է կայացվել առանց նիստի, եթե. (ա) առաջարկվող այդ որոշման մասին գրավոր ծանուցում է ուղարկվել (այդ թվում՝ էլեկտրոնային միջոցներով) բոլոր Անդամներին, և (բ) Քվեարկելու իրավունք ունեցող բոլոր անդամների մեծամասնությունը (որոնցից մեկը (1) կամ ավելին պետք է լինի/լինեն Քաղաքացիական հասարակությունը ներկայացնող անդամ/-ներ) գրավոր տվել է իր համաձայնությունն այդ որոշմանը: Ցանկացած որոշում, որը հաստատվել է գրավոր համաձայնությամբ, զետեղվում է Կառավարման խորհրդի նիստի արձանագրության մեջ: Չնայած վերոգրյալին, երկու (2) կամ ավելի Անդամների պահանջի դեպքում Կառավարման խորհուրդը պարտավոր է անցկացնել նիստ (հեռախոսով կամ այլ կերպ) նախքան գրավոր համաձայնությամբ նման որոշում կայացնելը:

Բաժին 1.10 Նիստերի անցկացումը հեռախոսային ժողովի միջոցով: Եթե սույն Կառավարման Համաձայնագրով այլ բան նախատեսված չէ, ապա Անդամները կարող են մասնակցել Կառավարման խորհրդի նիստի հեռախոսային ժողովի, տեսա-ժողովի կամ հաղորդակցության նմանատիպ այլ սարքերի միջոցով, որոնք թույլ են տալիս նիստի բոլոր մասնակիցներին լսել միմյանց և խոսել միմյանց հետ: Սույն **1.10** բաժնի համաձայն նիստի մասնակցությունը հանդիսանում է անձամբ ներկայություն այդ նիստին:

Բաժին 1.11 Հաշվետվության պահանջները: Կառավարման խորհրդի ցանկացած նիստի օրակարգը, դրա բոլոր մասնակիցների անունները, դրանում քննարկված հարցերը և դրա ընթացքում հաստատված բոլոր որոշումները պետք է արտացոլված լինեն նիստի արձանագրության մեջ, որը պետք է վարվի ՀՄՀ-Հայաստանի Քարտուղարի կողմից, ընդ որում, այդ արձանագրությունը պետք է ստորագրվի Նախագահի (կամ կոնկրետ նիստի նախագահի դերը կատարող անձի) կողմից: Կառավարման խորհրդի յուրաքանչյուր նիստի արձանագրությունը հրապարակվելու է ՀՄՀ-Հայաստանի Բնտերնետային կայքում տվյալ նիստից հետո երկու (2) շաբաթվա ընթացքում:

Բաժին 1.12 Վարձատրությունը: Անդամները չեն ստանում որևէ վարձատրություն իրենց՝ որպես Կառավարման խորհրդի Անդամի (կամ, համապատասխան դեպքում, Նախագահի) պարտականությունների կատարման համար:

ՀՈԴՎԱԾ II

ՀՄՀ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ

Բաժին 1.1. Նշանակումը: Կառավարման խորհուրդը նշանակում է ԳԳՏ-ին ընտրության և նշանակման բաց և մրցակցային գործընթացի արդյունքում, ընդ որում՝ նշանակումը պետք է հաստատվի ՀՄԿ-ի կողմից: ԳԳՏ-ի կողմից ՀՄՀ-Հայաստանի կառավարչական թիմի ընտրությունն և աշխատանքի անցումն իրականացվում է ընտրության և նշանակման բաց և մրցակցային գործընթացի արդյունքում (ԳԳՏ-ի հետ միասին՝ **“Կառավարման գրասենյակ”**): Կառավարման գրասենյակի յուրաքանչյուր Ղեկավարի նշանակումը և աշխատանքից ազատումը ենթակա է ՀՄԿ-ի և (բացառությամբ ԳԳՏ-ի) Կառավարման խորհրդի նախնական գրավոր հաստատման: Կառավարման գրասենյակը պետք է կազմված լինի հանրային կամ մասնավոր հատվածները ներկայացնող որակավորված փորձագետներից, ներառյալ այնպիսի ղեկավարներից և աշխատակիցներից, որոնք կարող են անհրաժեշտ լինել իր պարտականություններն արդյունավետորեն կատարելու համար, ներառյալ հետևյալը (յուրաքանչյուրը՝ **“Ղեկավար”**). (ա) ԳԳՏ, (բ) գլխավոր ֆինանսական տնօրեն (**“ԳՖՏ”**), (գ) գլխավոր իրավախորհրդատու (**“Գլխավոր**

իրավախորհրդատու»), (դ) մոնիթորինգի և գնահատման գծով ղեկավար («Մ և Գ ծրագրի ղեկավար»), (ե) բնապահպանական և սոցիալական ազդեցության գծով ղեկավար («ԲՄԱ ծրագրի ղեկավար»), (զ) գնումների ղեկավար («Գնումների ղեկավար»), (է) գյուղական ճանապարհների ենթածրագրի ղեկավար («Գյուղական ճանապարհների ենթածրագրի ղեկավար»), (ը) ոռոգման ենթածրագրի ղեկավար («Ոռոգման ենթածրագրի ղեկավար»), և (թ) ջրից մինչև շուկա ենթածրագրի ղեկավար («Ջրից մինչև շուկա ենթածրագրի ղեկավար»), իսկ Գյուղական ճանապարհների ենթածրագրի ղեկավարի և Ոռոգման ենթածրագրի ղեկավարի հետ միասին՝ «Ենթածրագրերի ղեկավարներ»): ԳԳՏ-ն լիազորում է Գլխավոր իրավախորհրդատուին կամ Կառավարման գրասենյակի որևէ այլ Ղեկավարի՝ հանդես գալու որպես ՀՄՀ-Հայաստանի քարտուղար («Քարտուղար»): Յուրաքանչյուր Ղեկավարի պարտականությունների համառոտ նկարագրությունը կցված է սույն Կառավարման Համաձայնագրին որպես «Բ» առդիր՝ սակայն պայմանով, որ այդ պարտականությունները կարող են ԳԳՏ-ի կողմից ժամանակ առ ժամանակ ճշգրտվել՝ նախապես դրա համար ստանալով ՀՄԿ-ի հաստատումը: Յուրաքանչյուր Ղեկավարի և ՀՄՀ-Հայաստանի կողմից որպես կարևոր աշխատակից դասակարգված յուրաքանչյուր աշխատակցի աշխատանքի պայմանները կառավարվում են ՀՄՀ-Հայաստանի և համապատասխան անդամի կամ աշխատակցի միջև կնքված աշխատանքային պայմանագրով: Կառավարման գրասենյակի գործունեությանն օժանդակելու է գրասենյակի գործերի կառավարիչը և համապատասխան վարչական ու օժանդակ աշխատակիցները: Եթե Կողմերի միջև գրավոր այլ պայմանավորվածություն չկա, ապա Կառավարման գրասենյակը ԳԳՏ-ի միջոցով ուղղակիորեն հաշվետու է Կառավարման խորհրդին: ԳԳՏ-ի անաշխատունակության, հրաժարականի կամ այլ պատճառով առկա չլինելու դեպքում որպես ԳԳՏ-ի ժամանակավոր պաշտոնակատար հանդես է գալիս Գլխավոր իրավախորհրդատու խորհրդականը, որը նաև պարտավոր է գործնականում հնարավորին չափ շուտ հրավիրել Կառավարման խորհրդի նիստ նոր ԳԳՏ նշանակելու նպատակով՝ սակայն պայմանով, որ նոր ԳԳՏ-ի նշանակումը ենթակա է հաստատման ՀՄԿ-ի կողմից:

Բաժին 1.2. Կառավարման գրասենյակի լիազորությունները: Կառավարման գրասենյակը պարտավոր է աջակցել Կառավարման խորհրդին Ծրագրի իրագործումը վերահսկելու հարցում և հիմնական պատասխանատվությունն է կրելու (Կառավարման խորհրդի ուղղորդման և վերահսկողության ներքո, ինչպես նաև՝ հաշվի առնելով Համաձայնագրով (ներառյալ՝ Համաձայնագրի 1-ին հավելվածի 3(գ) բաժնով, սույն Կառավարման Համաձայնագրով և համապատասխան Լրացուցիչ համաձայնագրերով նախատեսված՝ հաստատումներ տալու ՀՄԿ-ի իրավունքները)) Ծրագրի իրագործման ընդհանուր կառավարման համար, ներառյալ.

(ա) հետևյալի մշակման և կառավարման համար. (i) Իրագործման պլանի բոլոր բաղադրիչները (ներառյալ Ֆինանսական պլանը, Գնումային պլանը, Մ և Գ պլանը, Ֆինանսական հաշվետվողականության պլանը և բոլոր Ծրագրերի և Ենթածրագրերի աշխատանքային պլանները), (ii) Աուդիտի պլանները և ցանկացած աուդիտի արդյունքների նկատմամբ արձագանքները, (iii) կադրային պլանները, և (iv) ցանկացած փոփոխություններ, ձևափոխություններ կամ լրացումներ 2.2(ա)(i) - (iii) բաժիններում թվարկվածներից որևէ մեկի մեջ,

(բ) Ենթածրագրերի իրագործումը վերահսկելու համար, այդ թվում՝ Կառավարման խորհրդի հաստատմանը ներկայացնելու համար ՀՄԿ Հատկացումների հայտեր կազմելու,

(գ) Ընդհանուր ծրագրի, յուրաքանչյուր Ենթածրագրի և Համաձայնագրով և Լրացուցիչ համաձայնագրերով նախատեսված այլ գործունեության համակարգման համար, այդ թվում՝ Լիազորված իրավունքների և պարտականությունների կատարման առնչությամբ,

(դ) Ծրագրի և Ենթածրագրերի մոնիթորինգի և գնահատման կառավարման, իրագործման և համակարգման համար (ներառյալ տվյալների հավաքումը և վերլուծությունը),

(ե) Այնպիսի քաղաքականություններ և ընթացակարգեր մշակելու, վերահսկելու, կառավարելու, համակարգելու և իրագործելու համար, որոնք կարող են անհրաժեշտ լինել Համաձայնագրի արդյունավետ իրագործմանը նպաստելու համար և կարող են ցանկալի լինել որևէ Լրացուցիչ համաձայնագրի առնչությամբ, ինչպես նաև այնպիսի այլ քաղաքականությունների, ընթացակարգերի կամ գործունեության համար, որոնք կարող են պահանջվել Կառավարման խորհրդի կողմից՝ ի կատարումն Համաձայնագրի,

(զ) Ֆինանսների և հաշվապահական հաշվառման հետ կապված հաշվետվություններ կազմելու և վերանայելու համար (ներառյալ կառավարչական հաշվետվությունները, դեբիտորական պարտքերը, կրեդիտորական պարտքերը, ամսական, եռամսյակային և տարեկան ֆինանսական հաշվետվությունները, կանխիկի հոսքերի հաշվետվությունները և կանխիկի կանխատեսվող հոսքի պահանջները), Ծրագրի, յուրաքանչյուր Ենթածրագրի և Համաձայնագրի շրջանակներում կամ առնչությամբ նախատեսված կամ իրականացված այլ գործունեության կատարումը, մոնիթորինգը և գնահատումը, գնումները, բյուջեները և աուդիտի հաշվետվությունները, ինչպես նաև Կառավարման խորհրդի կողմից պահանջվող ցանկացած այլ հաշվետվություններ,

(է) Հայաստանի բյուջետային օրենսդրությամբ պահանջվող բոլոր հաշվետվությունները պատրաստելու և ներկայացնելու համար,

(ը) Ծրագրի, այդ թվում՝ յուրաքանչյուր Ենթածրագրի համար հաշվապահական հաշվառում վարելու համար,

(թ) Կառավարչական տեղեկատվության համակարգ մշակելու և պահպանելու համար, որը թույլ կտա համակարգված կերպով հետևել Համաձայնագրի շրջանակներում ծրագրի և ֆինանսների իրագործմանը, այդ թվում՝ յուրաքանչյուր Ենթածրագրի կատարմանը,

(ժ) Յուրաքանչյուր Ենթածրագրի շրջանակներում առկա վիճակի և հետագա ուսումնասիրությունների հանձնարարման և վերահսկողության համար, ինչպես կարող է պահանջվել Մ և Գ պլանով, ինչպես նաև ընդհանուր Ծրագրի և յուրաքանչյուր Ենթածրագրի տվյալների հավաքման, վերլուծության և հաշվետվության համակարգերի ստեղծման համար,

(ի) Գնումային համաձայնագրի և Գնումային ուղենիշների մեջ տեղ գտած չափանիշների համաձայն գնումներ և գնումային այլ գործողություններ կատարելու և վերահսկելու (այդ թվում՝ դրանք հաստատելու) համար,

(լ) ՀՄՀ-Հայաստանի Ինտերնետային կայքի կառավարման համար՝ դրանում տեղադրելով ընթացիկ տեղեկություններ Համաձայնագրին առնչվող գործունեության վերաբերյալ, Մ և Գ պլանի հաշվետվություններ, ֆինանսական հաշվետվություններ և Համաձայնագրին առնչվող գնումների վերաբերյալ տեղեկություններ (այնքանով, որքանով այդ գնումների վերաբերյալ տեղեկությունների տեղադրումը Ինտերնետային կայքում պահանջվում է Գնումային համաձայնագրով),

(խ) Խորհրդի որոշումների վերաբերյալ Կառավարման խորհրդին խորհուրդներ և գրավոր առաջարկություններ ներկայացնելու համար, որի առնչությամբ Կառավարման գրասենյակը պարտավոր է կազմել և Կառավարման խորհրդի հաստատմանը ներկայացնել համապատասխան պայմանագրեր, փաստաթղթեր կամ որոշումներ՝ միաժամանակ Կառավարման խորհրդին ներկայացնելով գրավոր առաջարկություն այն մասին, թե ինչպես վարվել տվյալ պայմանագրի, փաստաթղթի կամ որոշման հետ, տվյալ առաջարկությունը հիմնավորելու համար անհրաժեշտ ցանկացած այլ փաստաթղթերով հանդերձ,

(ծ) Համաձայնագրի ցանկացած հաշվետվություն և պարբերաբար Կառավարման խորհրդի կողմից պահանջվող ցանկացած այլ հաշվետվություն, փաստաթուղթ, պայմանագիր կամ որոշում պատրաստելու և Կառավարման խորհրդին ներկայացնելու համար՝ դրա հետ մեկտեղ Կառավարման խորհրդին

ներկայացնելով գրավոր առաջարկություն այն մասին, թե ինչ է խորհուրդ տրվում անել,

(կ) Կառավարման խորհրդին եռամսյակային հաշվետվություններ տրամադրելու համար, որոնք պետք է ներառեն հաշվետվություն տվյալ հաշվետվության հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տեղի ունեցած՝ Շահառուների խորհրդի նիստերի վերաբերյալ, ինչպես նաև տեղեկություններ այն մասին, թե Շահառուների խորհրդի առաջարկություններն ինչպես են հաշվի առնվել ՀՄՀ-Հայաստանի գործունեության մեջ,

(հ) Եռամսյակը մեկ **3.3(դ)** բաժնի համաձայն Շահառուների խորհրդին հաշվետվություններ ներկայացնելու և հանդիպելու համար,

(ձ) Ծրագրի հետ կապված՝ հարկերից ազատման հավաստագրեր կազմելու և ներկայացնելու համար, և

(դ) Ծրագրի իրագործումը կառավարելու գործառնություն շրջանակներում ցանկացած այլ պարտականություն կատարելու համար, որը կարող է պարբերաբար պահանջվել Կառավարման խորհրդի կողմից:

Բաժին 1.3. ԳԳՏ-ի դերը:

(ա) Համաձայնագրի, սույն Կառավարման Համաձայնագրի կամ Լրացուցիչ համաձայնագրերի դրույթների համաձայն, ԳԳՏ-ն պարտավոր է.

(i) Համաձայնագրի և Հայաստանի կիրառելի օրենսդրության համաձայն վերահսկել ՀՄՀ-Հայաստանի առօրյա գործունեությունը, հրավիրել և նախագահել Կառավարման գրասենյակի հանդիպումները, կառավարել ՀՄՀ-Հայաստանի աշխատակազմը, ինչպես նաև կազմակերպել և կառավարել ՀՄՀ-Հայաստանի գործունեությունը՝ *սակայն պայմանով, որ* ԳԳՏ-ն իրավասու է սույն 2.3(ա)(i) բաժնով նախատեսված իր պարտականությունները պատվիրակել որևէ Ղեկավարի,

(ii) Մշակել Կառավարման գրասենյակի և ՀՄՀ-Հայաստանի աշխատակազմի կառուցվածքը, գործառնությունները և պարտականությունները բաժանել ՀՄՀ-Հայաստանի աշխատակիցների միջև, հաստատել ներքին քաղաքականությունները, ընթացակարգերը և ՀՄՀ-Հայաստանի աշխատակիցների պաշտոնների նկարագրությունները (կամ, ՀՄՀ-Հայաստանի մշտական աշխատակիցներին ի լրումն վարձվող խորհրդատուների կամ կարճաժամկետ աշխատակիցների դեպքում, տեխնիկական առաջադրանքները),

(iii) Աշխատանքի ընդունել և աշխատանքից ազատել ՀՄՀ-Հայաստանի բոլոր աշխատակիցներին, որոշել յուրաքանչյուր աշխատակցի աշխատանքի պայմանները (այդ թվում՝ վարձատրությունը) և աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև դրանում կատարվող փոփոխությունները՝ *սակայն պայմանով, որ* ցանկացած որոշում, որը կայացվում է (i) որևէ Ղեկավարի, և (ii) որևէ կարևոր աշխատակցի, որևէ փորձագետի կամ խորհրդատուի վերաբերյալ, որի համախառն ամսական վարձատրությունը գերազանցում է \$2,000 (երկու հազար) ԱՄՆ դոլարը, պետք է նախապես գրավոր կերպով համաձայնեցվի Կառավարման խորհրդի և ՀՄԿ-ի հետ,

(iv) Մահմանել ՀՄՀ-Հայաստանի աշխատակիցների կարգապահական վարույթները և խրախուսանքի միջոցները՝ Հայաստանի օրենսդրության համաձայն, ինչպես նաև վերահսկել աշխատակիցների գործունեությունը,

(v) Ներկայացնել ՀՄՀ-Հայաստանը երրորդ անձանց հետ հարաբերություններում և հանդես գալ որպես Կառավարության պաշտոնական ներկայացուցիչ ՀՄԿ-ի հետ հարաբերություններում՝ *սակայն պայմանով, որ* ԳԳՏ-ն իրավասու է 2.3(ա)(v) բաժնով նախատեսված իր պարտականություններից ցանկացածը պատվիրակել որևէ Ղեկավարի,

(vi) Իրագործման պլանի յուրաքանչյուր բաղադրիչ և դրանում կատարվող համապատասխան փոփոխություն ներկայացնել Կառավարման խորհրդի հաստատմանը, ներկայացնել Տինանսական պլանը և Աուդիտի պլանը (ինչպես նաև դրանց համապատասխան փոփոխությունները, ձևափոխությունները և լրացումները) Կառավարման խորհրդին, ներկայացնել ֆինանսական կառավարման, կատարված գործունեության և ծրագրի իրագործման վերաբերյալ հաշվետվություններ, ներկայացնել կատարված աուդիտների արդյունքները, նախորդ տնտեսական տարվա մանրակրկիտ հաշվետվություն և Իրագործման պլանի բոլոր առումներով առաջընթացի հաշվետվությունը տարեկան աուդիտից հետո գումարվող՝ Կառավարման խորհրդի առաջին նիստի ընթացքում, ինչպես նաև ներկայացնել Համաձայնագրով պահանջվող կամ Կառավարման խորհրդի կողմից պահանջվող այլ հաշվետվություններ,

(vii) Կազմակերպել Կառավարման խորհրդի և Շահառուների խորհրդի նիստերի պատրաստումը և օրակարգերի տարածումը, ինչպես նաև կազմակերպել և անցկացնել Կառավարման խորհրդի նիստերը՝ *սակայն պայմանով, որ* ԳԳՏ-ն իրավասու է այս պարտականությունները պատվիրակել ցանկացած Ղեկավարի,

(viii) Հաստատել գործողություններ որոշումներ, փաստաթղթեր կամ պայմանագրեր, ներառյալ որոշ Վերահատկացումներ (այնքանով, որքանով այդ հաստատումը պահանջվում է 2.3(բ) բաժնի համաձայն), Համաձայնագրի հաշվետվություններ, կադրային ռեսուրսների վերաբերյալ որոշ որոշումներ, ինչպես նաև գնումների հետ կապված որոշ որոշումներ՝ ՀՄՀ-Հայաստանի մասով, որոնց համար Համաձայնագրով կամ սույն Կառավարման Համաձայնագրով Կառավարման խորհրդի հաստատումը չի պահանջվում,

(ix) Վերանայել և, եթե անհրաժեշտ է, հաստատել ցանկացած գործունեություն կամ գործողություններ, որոնց համար Գնումային համաձայնագրով պահանջվում է ԳԳՏ-ի հաստատումը՝ *սակայն պայմանով, որ* (եթե ՀՄԿ-ն այլ կերպ չի ծանուցել) ԳԳՏ-ն իրավասու է սույն 2.3(ա)(ix) բաժնով նախատեսված իր պարտականություններից ցանկացածը պատվիրակել որևէ Ղեկավարի, և

(x) Իրականացնել ՀՄՀ-Հայաստանի գործունեությանն առնչվող այլ խնդիրների հետ կապված այլ լիազորություններ Համաձայնագրի, Հայաստանի օրենսդրության և Կանոնադրության համաձայն:

(բ) ԳԳՏ-ն պարտավոր է գրավոր հաստատել հետևյալներից յուրաքանչյուրը.

() Խորհրդի որոշման կարգով Կառավարման խորհրդին ներկայացված ցանկացած հարցի վերաբերյալ Կառավարման խորհրդի առաջարկությունները,

() Վերահատկացումները որևէ Մատակարարի՝ *սակայն պայմանով, որ* Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի կամ Ոռոգման ենթակառուցվածքների կամ Ջրից մինչև շուկա ենթածրագրի գործունեության հետ կապված որևէ Վերահատկացման առնչությամբ ԳԳՏ-ն իրավասու է համապատասխան ծրագրի Ղեկավարին պատվիրակել տվյալ Վերահատկացումը հաստատելու՝ ԳԳՏ-ի իրավասությունը, որը (1) առանձին կամ նույն Մատակարարին կամ նրա հետ փոխկապակցված որևէ անձի կատարված կամ սպասվող կատարվելիք այլ Վերահատկացումների հետ միասին չի գերազանցի \$50,000 (հիսուն հազար) ԱՄՆ դոլարը կամ (2) նույն Մատակարարին կամ նրա հետ փոխկապակցված որևէ անձի կատարված կամ սպասվող կատարվելիք այլ Վերահատկացումների հետ միասին կգերազանցի \$50,000 (հիսուն հազար) ԱՄՆ դոլարը, սակայն կատարվում է միննույն պայմանագրի համաձայն,

(xi) ՀՄՀ-Հայաստանին ապրանքներ կամ ծառայություններ մատակարարելու ցանկացած պայմանագրի կնքումը կամ նման պայմանագրում ցանկացած փոփոխություն, լրացում, կամ նման պայմանագրի լուծում կամ կասեցում (*սակայն պայմանով, որ* չնայած որ ԳԳՏ-ն պարտավոր է գրավոր հաստատել ցանկացած նման պայմանագիր, որի դեպքում կնքումը վկայություն է հաստատման (կամ դրա փոփոխության, լրացման, լուծման կամ կասեցման), ԳԳՏ-ն իրավասու է համապատասխան ցանկացած Ղեկավարի պատվիրակել նման պայմանագիր (կամ դրա փոփոխություն, լրացում, լուծում կամ կասեցում) ստորագրելու՝ ԳԳՏ-ի իրավասությունը), (եթե պայմանագրի համախառն արժեքը չի գերազանցում \$2,000 (երկու հազար) ԱՄՆ դոլարը),

(xii) Գնումային համաձայնագրով կամ այլ Լրացուցիչ համաձայնագրերով նախատեսված գնումային այլ գործունեության վավերացում, և

(xiii) Համաձայնագրի ցանկացած հաշվետվություն կամ ցանկացած այլ հաշվետվություն, որը կարող է ժամանակ առ ժամանակ պահանջվել Կառավարման խորհրդի կողմից:

(գ) Բացառությամբ սույնով նախատեսված դեպքերի, ԳԳՏ-ն իրավունք չունի պատվիրակել **2.3** բաժնով նախատեսված իր պարտականությունները, իրավունքները և լիազորությունները:

Բաժին 1.4. Հաշվետվության պահանջները: ԳԳՏ-ն, Կառավարման գրասենյակի աջակցությամբ, պարտավոր է անհապաղ տրամադրել և հավաստագրել ցանկացած հաշվետվություն, փաստաթուղթ և այլ նյութ, որը պահանջվել է Կառավարման խորհրդի կամ ՀՄԿ-ի կողմից, կամ պետք է ներկայացվի նրանց: Կառավարման խորհրդին ներկայացվող ցանկացած փաստաթղթի անգլերեն կրկնօրինակը պետք է ուղարկվի ՀՄԿ-ին (եթե ՀՄԿ-ն ժամանակ առ ժամանակ ՀՄՀ-Հայաստանին այլ կերպ չի ծանուցել):

Բաժին 1.5. ՀՄԿ ֆինանսավորման օգտագործման սահմանափակումները

(ա) ՀՄՀ-Հայաստանը պարտավոր է ապահովել, որպեսզի ՀՄԿ-ի ֆինանսավորման օգտագործումը համապատասխանի հետևյալ պահանջներին, ինչպես նաև վերահսկի Թույլատրելի հաշիվները հետևյալ պահանջների կատարման իմաստով. (i) Համաձայնագրի **2.3** բաժին, (ii) Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման, սահմանափակիչ առևտրի կամ բոյկոտների մասին Ամերիկայի Միացյալ Նահանգների բոլոր օրենքների, իրավական ակտերի և գործադիր հրամանների պահանջներին, ինչպես նաև օրենքի, գործադիր հրամանի կամ կանոնակարգի տեսքով ժամանակ առ ժամանակ ընդունվող և Ամերիկայի Միացյալ

Նահանգների Գանձապետական դեպարտամենտի Արտասահմանում Գույքային Գործողությունների Վերհսկման Գերատեսչության կամ նրա իրավահաջորդ որևէ կառավարական մարմնի կողմից վերահսկվող՝ պատժամիջոցների մասին Ամերիկայի Միացյալ Նահանգների օրենքներին և իրավական ակտերին, բոլոր այլ տնտեսական պատժամիջոցներին և այլ սահմանափակումներին, ներառյալ “18 U.S.C. Section 1956”-ը, “18 U.S.C. Section 1957”-ը, “18 U.S.C. Section 2339A”-ը, “18 U.S.C. Section 2339B”-ը, “18 U.S.C. Section 2339C”-ը, “18 U.S.C. Section 981”-ը, “18 U.S.C. Section 982”-ը, Գործադիրի թիվ 13224 հրամանը (“Executive Order”) “Ահաբեկչություն կատարող, կատարել սպառնացող, կամ ահաբեկչությանն օժանդակող անձանց գույքի նկատմամբ արգելանքի կիրառման և նրանց հետո գործարքների արգելման մասին” (“Blocking Property and Prohibiting Transactions with Persons Who Commit, Threaten to Commit, or Support Terrorism”), “15 C.F.R. Part 760”-ը, և բոլոր այլ տնտեսական պատժամիջոցների ծրագրեր, որոնք թվարկված են “31 C.F.R.”-ի 500-ից մինչև 598-րդ բաժիններում, և (iii) ահաբեկչության ֆինանսավորման, փողերի լվացման կամ նմանաբնույթ գործունեության վերաբերյալ Հայաստանի կիրառելի օրենքների պահանջները:

(բ) ՀՄՀ-Հայաստանը պարտավոր է պատշաճ կերպով ստուգել միջոցներ ստացող ցանկացած անհատի, կորպորացիայի կամ այլ սուբյեկտի, ընդ որում, ստուգումը կարող է ներառել ստուգում, թե արդյոք նրա անունն առկա է հսկվող ցանկերում, ինչպիսիք են, օրինակ, www.epls.gov, www.treas.gov/offices/enforcement/ofac հասցեներում պահվող ցանկերը, կամ Միավորված Ազգերի Կազմակերպության Անվտանգության խորհրդի 1267-ի հանձնաժողովի կողմից վարվող՝ անձանց և սուբյեկտների համախմբված ցանկը:

(գ) ՀՄՀ-Հայաստանը պարտավոր է. (Ա) նման ստուգում անցկացնել Վերահատկացումների կապակցությամբ կամ, ՀՄԿ-ի ողջամիտ պահանջվող, որոշակի պարբերականությամբ, ներառյալ համապատասխան Բանկային համաձայնագրի հիման վրա Բանկերից որևէ մեկի պատրաստած ստուգման հաշվետվության ուսումնասիրություն, և (Բ) առնվազն եռամսյակը մեկ կամ, ՀՄԿ-ի կողմից պահանջվող, այլ ողջամիտ պարբերականությամբ, ներկայացնել նման մոնիտորինգի և ստուգումների հաշվետվություն:

(դ) ՀՄՀ-Հայաստանը երաշխավորում և հավաստիացնում է, որ որևէ Անդամ, Պաշտոնյա կամ աշխատակից չի ստացել և չի ստանա որևէ վճարում սույն Կառավարման Համաձայնագրի կապակցությամբ, և որ ՀՄՀ-Հայաստանի կամ նրա Անդամների, Պաշտոնյաների կամ աշխատակիցների կողմից չեն կատարվել սույն Կառավարման Համաձայնագրի հետ կապված որևէ վճարումներ, որոնցով կիսախտվեր “Օտար երկրներում կոռումպացված գործողությունների մասին” Ամերիկայի Միացյալ Նահանգների 1977թ. օրենքը դրանում կատարված համապատասխան փոփոխություններով հանդերձ (“15 U.S.C. 78a et seq.”), կամ

կաշառակերության կամ կոռուպցիայի վերաբերյալ Հայաստանի համապատասխան կիրառելի օրենքները կամ այլ իրավական ակտերը:

ՀՈԴՎԱԾ III ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Բաժին 1.0. Կազմը:

(ա) Կառավարությունը պարտավոր է ապահովել շահառուների խորհրդի ստեղծումը (“**Շահառուների խորհուրդ**”), որը սկզբում բաղկացած կլինի տասնմեկ (11) անդամներից, որոնք կներկայացնեն Ծրագրի տարբեր շահառուների: Շահառուների խորհրդի անդամները, որոնք պետք է լինեն ՀԿ հանրության (այդ թվում՝ բնապահպանության հարցերով զբաղվող ՀԿ-ների, ջրօգտագործողների միությունների և ֆերմերների խմբերի) կողմից կազմակերպված կամ նրանց ներկայացուցիչների մասնակցությամբ անցկացվող ազգային եւ/կամ ռեգիոնալ ժողովներում ընտրված անհատներ՝ հաշվի առնելով համապատասխան գենդերային նկատառումները և մասնագիտացման շահերն ու Ծրագրի իրագործմանն առնչվող գիտելիքները և փորձը: Կառավարությունը տրամադրելու է կամ ապահովելու է, որ պետք է նման ժողովի կազմակերպիչները տրամադրեն դրա մասին բավարար ծանուցում, որը թույլ կտա ապահովել ընդգրկումն մասնակցություն, ընդ որում, ծանուցումը պետք է նաև ներառի Հայաստանի առաջատար թերթերում և ՀՄՀ-Հայաստանի ինտերնետային կայքում այդ ժողովի անցկացման ժամի և վայրի մասին հայտարարության հրապարակումը, հանրությանը մասնակցելու հրավեր ներկայացնելը և Շահառուների խորհրդի կազմում աշխատելու համար թեկնածություններ հրավիրելը: Նշված հայտարարությունները պետք է նշված կարգով հրապարակվեն համապատասխան ժողովի օրվանից առնվազն քսան (20) օր առաջ և ներառեն Շահառուների խորհրդում առկա պաշտոնների համար ընտրության պահանջները:

(բ) Շահառուների խորհրդի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի նշանակել փոխարինողի, որը պետք է հաստատվի այլ անդամների ձայների մեծամասնությամբ և այդ պաշտոնում հանդես գա այն ժամանակ, երբ տվյալ անդամն անկարող է մասնակցել Շահառուների խորհրդի որևէ նիստի:

(գ) Շահառուների խորհուրդը կարող է նաև ձայների մեծամասնությամբ նշանակի Շահառուների խորհրդի առաջին և երկրորդ փոխարինող անդամների: Եթե Շահառուների խորհրդի նիստին չեն մասնակցում ոչ անդամը, ոչ նրա կողմից առաջադրված փոխարինողը, ապա տվյալ նիստին քվեարկելու իրավունք ունեցող անդամի կարգավիճակող մասնակցում է առաջին փոխարինողը, իսկ նրա բացակայության դեպքում՝ երկրորդը:

(դ) Շահառուների խորհրդի անդամները պաշտոնավարում են մեկ (1) տարի ժամկետով, պայմանով որ կարող են վերընտրվել:

(ե) Նախապես ստանալով ՀՄԿ-ի և Կառավարման խորհրդի գրավոր համաձայնությունը, (i) Շահառուների խորհրդի կազմը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել՝ ապահովելու նախատեսված շահառուների լայն ներկայացվածություն, և (ii) Շահառուների խորհրդի տվյալ պահին առկա անդամների ձայների մեծամասնությամբ Շահառուների խորհրդի անդամների թիվը կարող է ավելացվել, սակայն որևէ դեպքում չի կարող գերազանցել տասնհինգը (15): Անդամների թիվն ավելացնելու արդյունքում առաջացող թափուր տեղերը լրացվում են 3.1 բաժնի (ա), (բ) և (գ) կետերում նկարագրված կարգով:

Բաժին 2.0. Դերը և պարտականությունները:

(ա) Շահառուների խորհուրդը գործելու է որպես մեխանիզմ, որը մասնավոր հատվածի, քաղաքացիական հասարակության և պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներին հնարավորություն կընձեռի խորհուրդներ և կարծիքներ ներկայացնել ՀՄՀ-Հայաստանին Համաձայնագրի իրագործման վերաբերյալ:

(բ) Շահառուների խորհուրդը պարտավոր է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների թվից ընտրել Կառավարման խորհրդի կազմում Քաղաքացիական հասարակությունը ներկայացնող անդամներին՝ հաշվի առնելով պատշաճ գենդերային ներկայացվածություն և Ծրագրի նախատեսված շահառուների ներկայացվածությունն ապահովելու անհրաժեշտությունը:

(գ) Շահառուների խորհուրդը հնարավորություն կունենա առնվազն եռամսյակը մեկ պարբերաբար ԳԳՏ-ին և Կառավարման խորհրդին ներկայացնել իր կարծիքները և առաջարկությունները:

(դ) Շահառուների խորհուրդը պարտավոր է նշանակել քարտուղար, որը պետք է, ի մասնավորի, կազմակերպի նիստերի գումարումը և անցկացումը և վարի Շահառուների խորհրդի նիստերի պաշտոնական արձանագրությունները:

(ե) Շահառուների խորհրդի անդամները չեն ստանում որևէ վարձատրություն Շահառուների խորհրդի կազմում իրենց պարտականությունների կատարման առնչությամբ:

Բաժին 3.0. Նիստերը, որոշումները:

(ա) Շահառուների խորհուրդը լրիվ կազմով պետք է գումարվի եռամսյակն առնվազն մեկ անգամ, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, պարբերաբար կարող են գումարվել այլ նիստեր: Շահառուների խորհրդի արտահերթ նիստ կարող է գումարվել նաև Շահառուների խորհրդի երկու (2) անդամների, ԳԳՏ-ի կամ Կառավարման խորհրդի Նախագահի պահանջով: Շահառուների խորհրդի

քարտուղարը պետք է Շահառուների խորհրդի բոլոր անդամներին տրամադրի ծանուցում, որի մեջ նշված կլինի Շահառուների խորհրդի նիստի վայրը, ամսաթիվը, ժամը և օրակարգը. (ա) հերթական եռամսյակային նիստի դեպքում՝ անձամբ, փոստով, կամ ֆաքսիմիլով, հերթական եռամսյակային նիստի ամսաթվից առնվազն յոթ (7) օր առաջ, (բ) արտահերթ նիստի վերաբերյալ՝ կամ փոստով, արտահերթ նիստի ամսաթվից առնվազն 48 ժամ առաջ, կամ անձամբ կամ հեռախոսով՝ տվյալ արտահերթ նիստի ամսաթվից առնվազն 24 ժամ առաջ: Չնայած վերոգրյալին. (x) Շահառուների խորհրդի ցանկացած անդամ կարող է գրավոր հրաժարվել նման նիստի վերաբերյալ ծանուցում ստանալու պահանջ ներկայացնելու իրավունքից, և (y) անդամի ներկայությունն այդ նիստին հանդիսանում է նիստի վերաբերյալ ծանուցում ստանալու պահանջ ներկայացնելու իրավունքից հրաժարում: Շահառուների խորհրդի վավեր նիստ չի կարող անցկացվել, եթե յուրաքանչյուր անդամ չի ստացել այդ նիստի ծանուցում (կամ չի հրաժարվել նման ծանուցում պահանջելու իրավունքից, կամ չի համարվում, որ նա հրաժարվել է այդ իրավունքից):

(բ) Շահառուների խորհրդի ցանկացած նիստի ընթացքում Քվորում ապահովվում է Շահառուների խորհրդի անդամների առնվազն պարզ մեծամասնությամբ: Շահառուների խորհրդի բոլոր որոշումները պետք է կայացվեն քվորում ունեցող նիստին ներկա գտնվող անդամների ձայների առնվազն պարզ մեծամասնությամբ, ընդ որում, յուրաքանչյուր անդամ ունի մեկ (1) ձայնի իրավունք: Բացառությամբ 3.3(ե) բաժնով նախատեսվածի, Շահառուների խորհրդի ցանկացած որոշում, ընտրություն, նշանակում կամ գործողություն՝ անկախ սույն Կառավարման Համաձայնագրով դրա ուղղակիորեն նախատեսված լինելու կամ չլինելու հանգամանքից, կայացվում է սույն 3.3(բ) բաժնով նախատեսված կարգի համաձայն:

(գ) Եթե Շահառուների խորհրդի որևէ անդամ (ինչպես նաև 3.1(բ) բաժնի համաձայն նրա կողմից նշանակված փոխարինողը) չի մասնակցում Շահառուների խորհրդի երկու հաջորդական նիստերի, ապա համարվում է, որ տվյալ անդամը հրաժարական է տվել Շահառուների խորհրդի կազմից: (դ)

Կառավարման գրասենյակը պարտավոր է Համաձայնագրի իրագործման և Նպատակների կատարման ուղղությամբ առաջընթացի վերաբերյալ թարմ տեղեկություններ ներկայացնել Շահառուների խորհրդի յուրաքանչյուր եռամսյակային նիստի ընթացքում, ինչպես նաև պարտավոր է ներկայացնել Մ և Գ պլանի, Իրագործման պլանի և Ենթածրագրերի հաշվետվությունների և Ենթածրագրերի միջոցառումների թարմացված տարբերակները:

(ե) Եթե սույն Կառավարման Համաձայնագրով այլ բան նախատեսված չէ, ապա ապա ցանկացած որոշում, որը պետք է կայացվի կամ կարող է կայացվել Շահառուների խորհրդի որևէ նիստի ընթացքում, կարող է կայացվել առանց նիստի, եթե. (i) առաջարկվող այդ որոշման մասին ծանուցում է ուղարկվել Շահառուների խորհրդի բոլոր անդամներին, և (ii) Շահառուների խորհրդի բոլոր

անդամների թվի մեծամասնությունը գրավոր տվել է իր համաձայնությունն այդ որոշմանը: Ցանկացած որոշում, որը հաստատվել է գրավոր համաձայնությամբ, գետեղվում է Շահառուների խորհրդի նիստի արձանագրության մեջ: Չնայած վերոգրյալին, Շահառուների խորհրդի երկու (2) կամ ավելի Անդամների պահանջի դեպքում Շահառուների խորհուրդը պարտավոր է անցկացնել նիստ (հեռախոսով կամ այլ կերպ) նախքան գրավոր համաձայնությամբ նման որոշում կայացնելը:

(գ) Եթե սույն Կառավարման Համաձայնագրով այլ բան նախատեսված չէ, ապա Շահառուների խորհրդի անդամները կարող են մասնակցել Շահառուների խորհրդի նիստին հեռախոսային կոնֆերանսի, վիդեո-կոնֆերանսի կամ հաղորդակցության նմանաբնույթ այլ սարքերի միջոցով, որոնք թույլ են տալիս նիստի բոլոր մասնակիցներին լսել միմյանց և խոսել միմյանց հետ: Սույն 3.3(գ) բաժնի համաձայն նիստի մասնակցությունը հանդիսանում է անձամբ ներկայություն այդ նիստին:

Բաժին 4.0. Հասանելիություն, թափանցիկություն: Շահառուների խորհրդի անդամները պետք է հասանելի լինեն այն շահառուների համար, ում իրենք ներկայացնում են հանձնաժողովում, որպեսզի ստանան նրանց մեկնաբանությունները կամ առաջարկությունները Ծրագրի վերաբերյալ: Շահառուների խորհրդի բոլոր նիստերի արձանագրությունները պետք է հրապարակվեն ՀՄՀ-Հայաստանի ինտերնետային-կայքում, ՀՄՀ-Հայաստանի կողմից Շահառուների խորհրդի քարտուղարից Շահառուների խորհրդի հաստատած այդ արձանագրության ստացումից հետո հինգ (5) աշխատանքային օրվա ընթացքում:

ՀՈԴՎԱԾ IV

ՀՄԿ-Ի ԿՈՂՄԻՑ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ԱՅԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բաժին 1.0. ՀՄԿ-ի կողմից հաստատման իրավունքները: Ի լրումն Համաձայնագրով, սույն Կառավարման Համաձայնագրով, Կանոնադրությամբ և Հիմնադիրների որոշմամբ ՀՄԿ-ին վերապահված բոլոր այլ իրավունքների, ՀՄԿ-ն իրավունք ունի հաստատել հետևյալը.

(ա) Վերահատկացում ցանկացած Մատակարարի՝ այնքանով, որքանով ՀՄԿ-ն ՀՄՀ-Հայաստանին և Ֆինանսական գործակալին ծանուցել է այն մասին, որ ՀՄԿ-ն ցանկանում է վերանայել և հաստատել այդ Վերահատկացումը,

(բ) Ցանկացած գործունեություն կամ գործողություն, որի համար Գնումների համաձայնագրի համաձայն պահանջվում է ՀՄԿ-ի հաստատումը,

(գ) Բացառությամբ վերոհիշյալ (բ) պարբերությամբ նախատեսվածի, ցանկացած պայմանագիր, որի արժեքը հավասար է **\$100,000** (հարյուր հազար ԱՄՆ դոլարի) կամ գերազանցում է այդ գումարը կամ ցանկացած այլ գումար, որը կարող է համաձայնեցվել ՀՄԿ-ի և ՀՄՀ-Հայաստանի հետ, ներառյալ դրա ցանկացած փոփոխություն, ձևափոխություն, դադարեցում կամ կասեցում,

(դ) հաստատման ցանկացած իրավունք, որը Համաձայնագրով տրվել է ՀՄԿ-ին, ներառյալ Համաձայնագրի Առդիր 1-ի 3(գ) պարբերությամբ նախատեսված գործառնությամբ, գործունեությամբ, պայմանագրով կամ փաստաթղթով (յուրաքանչյուր նման հաստատում պետք է ստացվի նախքան այդ գործառնության, գործունեության, պայմանագրի կամ փաստաթղթի կնքումը կամ իրականացումը, ինչպես նաև դրա առնչությամբ ՀՄԿ-ի Հատկացման կամ Վերահատկացման պահանջ ներկայացնելը),

(ե) հաստատման ցանկացած իրավունք, որը Հատկացումների համաձայնագրով կամ Գնումների համաձայնագրով վերապահված է ՀՄԿ-ին, և

(զ) հայաստանյան բարեգործական կազմակերպությունների անունները, որոնք ստանալու են Ջրից մինչև շուկա գործունեության գյուղական ֆինանսավորման ծրագրի շրջանակներում ՀՄՀ-Հայաստանին վերադարձված ՀՄԿ-ի ֆինանսավորում:

Բաժին 2.0. ՀՄԿ-ի պատասխանատվության բացառումը: Չնայած սույն Կառավարման Համաձայնագրի, Համաձայնագրի կամ որևէ Լրացուցիչ համաձայնագրի՝ հակառակը նախատեսող դրույթների, ՀՄՀ-Հայաստանի և/կամ Կառավարության որևէ գործողության, որոշման, պայմանագրի կամ փաստաթղթի վերանայումը և/կամ հաստատումը ՀՄԿ-ի կողմից. (ա) ՀՄԿ-ի համար չի

առաջացնում կամ ստեղծում որևէ պատասխանատվություն այդ գործողության, որոշման, պայմանագրի կամ փաստաթղթի առնչությամբ, և (բ) չի բացառում Համաձայնագրի, սույն Կառավարման Համաձայնագրի կամ Լրացուցիչ համաձայնագրերի համաձայն ՀՄԿ-ին վերապահված իրավունքների կամ արտոնությունների իրականացումը ՀՄԿ-ի կողմից:

Բաժին 3.0. ՀՄԿ-ի տեղեկատվական իրավունքները: Ֆինանսական գործակալին (ինչպես նաև ՀՄԿ-ին, եթե վերջինս այդ մասին ծանուցում է ՀՄՀ-Հայաստանին) տրամադրվում է ՀՄԿ-ի կողմից (ուղղակիորեն կամ անուղղակիորեն) ֆինանսավորվող յուրաքանչյուր պայմանագրի կրկնօրինակ՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք ՀՄԿ-ն այդ պայմանագրի նկատմամբ ունի հաստատման իրավունքներ:

Բաժին 4.0. Այլ պարտավորություններ: ՀՄՀ-Հայաստանը պարտավոր է կատարել. (ա) Հայաստանի ողջ կիրառելի օրենսդրության, և (բ) սույն Կառավարման Համաձայնագրի, Համաձայնագրի բոլոր վերաբերելի դրույթների (ներառյալ Համաձայնագրի 2.3, 2.5, 3.2 և 3.8 բաժինների), Հատկացումների համաձայնագրի և համապատասխան այլ Լրացուցիչ համաձայնագրերի պահանջները, որոնց դրույթները սույնով հղումով դարձվում են սույնի մաս՝ “*mutatis mutandis*” սկզբունքով: ՀՄՀ-Հայաստանը պարտավոր է չհիմնադրել որևէ Փոխկապակցված անձ կամ դուստր կազմակերպություն առանց Կառավարության և ՀՄԿ-ի գրավոր համաձայնությունը նախապես ստանալու:

Բաժին 5.0. ՀՄՀ-Հայաստանի կողմից հաստատումները: Իրականացնելով Համաձայնագրով, սույն Կառավարման Համաձայնագրով և այլ Լրացուցիչ համաձայնագրերով նախատեսված՝ հաստատման իր իրավունքները, ՀՄՀ-Հայաստանը. (ա) պարտավոր է գործել ողջամտորեն կոմերցիոն կերպով և ոչ ողջամիտ կերպով չմերժել իր հաստատումը տրամադրելը, և (բ) պարտավոր է յուրաքանչյուր որոշում կայացնել արդար և օբյեկտիվ հիմքով՝ օգտագործելով համապատասխան Լրացուցիչ համաձայնագրով նախատեսված չափանիշները:

Բաժին 6.0. Թույլատրելի լիազորված ներկայացուցիչ: Նախարարությունը, որը գործում է Կառավարության անունից, ինչպես նաև ՀՄՀ-Հայաստանը և ՀՄԿ-ն յուրաքանչյուրը սույնով ընդունում են, որ ՀՄՀ-Հայաստանը Կառավարության կողմից նշանակվել է որպես “**Թույլատրելի լիազորված ներկայացուցիչ**”՝ ինչպես նկարագրված է Համաձայնագրի 3.2(գ) բաժնում, և գործելու է որպես Կառավարության գործակալ Օրագրի իրագործման առումով: ՀՄՀ-Հայաստանի գործառնական ծախսերը, որոնք ֆինանսավորվելու են ՀՄԿ-ի կողմից, կհամարվեն ՀՄՀ-Հայաստանին վճարման ենթակա գործակալական վարձավճարի վերջնական և ամբողջական վճարում և գործակալական ծախսերի դիմաց վերջնական և ամբողջական փոխհատուցում:

Բաժին 7.0. Աուդիտներ:

(ա) ՀՄՀ-Հայաստանի ֆինանսական տարին սկսվում է Համաձայնագրի Ուժի մեջ մտնելու ամսաթվին և ավարտվում **2006թ.** դեկտեմբերի **31**-ին: Դրան հաջորդող յուրաքանչյուր ֆինանսական տարի սկսվում է այդ տարվա հունվարի **1**-ին և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի **31**-ին:

(բ) ՀՄՀ-Հայաստանի ֆինանսական հաշվետվությունները տարին մեկ անգամ աուդիտի են ենթարկվում անկախ աուդիտորի կողմից, որն ընտրվում է ՀՄԿ-ից նախապես ստացված գրավոր համաձայնությամբ: Կառավարման գրասենյակը պարտավոր է աջակցել աուդիտորին և տրամադրել վերջինիս կողմից պահանջվող բոլոր տեղեկությունները: Ամենամյա աուդիտի զեկույցը պետք է ներկայացվի ՀՄԿ-ին յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո իննսուն **(90)** օրվա ընթացքում: ՀՄԿ-ի պահանջով, կամ Համաձայնագրի կամ Աուդիտի պլանի պահանջների համաձայն, ՀՄՀ-Հայաստանը պարտավոր է կազմակերպել ժամանակ առ ժամանակ անցկացվող այլ պարբերական կամ հատուկ աուդիտներ:

(գ) ՀՄՀ-Հայաստանը պարտավոր է վարել. (i) Համաձայնագրի շրջանակներում ՀՄՀ-Հայաստանի կողմից կատարման ենթակա պարտավորությունների կատարման մասին ստույգ և համակարգված գրքեր, գրառումներ, փաստաթղթեր և այլ ապացույցներ, և (ii) Համաձայնագրի բոլոր գրառումները՝ Համաձայնագրի **3.8** բաժնի պահանջների համաձայն: ՀՄՀ-Հայաստանը պարտավոր է թույլատրել ՀՄԿ-ի, Գլխավոր տեսուչի, Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության Հաշվետվողականության գրասենյակի, Կառավարության, սույնով նախատեսված կամ Համաձայնագրի նպատակների համար անցկացված ցանկացած այլ աուդիտի համար պատասխանատու բոլոր աուդիտորների լիազոր ներկայացուցիչներին, ինչպես նաև թվարկվածների կողմից ներգրավված բոլոր գործակալներին կամ ներկայացուցիչներին՝ անցկացնել Ծրագրի ցանկացած գնահատում, ուսումնասիրություն, աուդիտ կամ գնահատում, ցանկացած ողջամիտ ժամանակ հնարավորություն ընձեռել աուդիտի ենթարկել, ուսումնասիրել, գնահատել, ստուգել կամ պատճենահանել ՀՄՀ-Հայաստանի վերահսկողության կամ տրամադրության տակ գտնվող բոլոր գրառումները և փաստաթղթերը (յուրաքանչյուրը՝ **“Աուդիտ”**): ՀՄՀ-Հայաստանը պարտավոր է ապահովել ՀՄՀ-Հայաստանի բոլոր համապատասխան անդամների, պաշտոնյաների, աշխատակիցների, ՀՄՀ-Հայաստանի հետ փոխկապակցված անձանց, ՀՄՀ-Հայաստանի կապալառուների, ներկայացուցիչների և գործակալների հասանելիությունը ՀՄԿ-ի, Գլխավոր տեսուչի, Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության Հաշվետվողականության գրասենյակի, Կառավարության կամ համապատասխան աուդիտորի, վերստուգիչի կամ գնահատողի, կամ նրանց ներկայացուցիչների կամ գործակալների համար: ՀՄՀ-Հայաստանը պարտավոր է պահպանել և տրամադրել այդ գրքերը, գրառումները և փաստաթղթերը սույն

Կառավարման Համաձայնագրի սպառումից կամ դադարեցումից հետո առնվազն հինգ (5) տարի ժամկետով, կամ ավելի երկար, եթե դա պահանջվում է որևէ վեճ, պահանջ, աուդիտի եզրահանգում լուծելու կամ օրենսդրական որևէ պահանջ բավարարելու համար:

ՀՈԴՎԱԾ V ԺԱՄԿԵՏ, ԿԱՍԵՑՈՒՄ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄ

Բաժին 1.0. Ժամկետ:

(ա) Սույն Կառավարման Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն օրվա դրությամբ, երբ ՀՄԿ-ն ստանա Հայաստանի օրենսդրության համաձայն սույն Կառավարման Համաձայնագրի վավերացման մասին ծանուցում («**Ուժի մեջ մտնելու ամսաթիվ**») և դադարում Համաձայնագրի ժամկետը լրանալուց կամ դադարեցնելուց հետո հարյուր քսաներորդ (120) օրը (բացառությամբ երբ այն ավելի վաղ է դադարեցվում սույն Կառավարման Համաձայնագրի դրույթների համաձայն):

(բ) Նախքան Համաձայնագրի ժամկետի լրանալը կամ Համաձայնագրի դադարեցումը, Կողմերը պարտավոր են բարեխղճորեն խորհրդակցել՝ նպատակ ունենալով գրավոր համաձայնության հասնել հետևյալի շուրջ. (i) Համաձայնագրի ժամկետի լրանալուց կամ Համաձայնագրի դադարեցումից հետո ՀՄՀ-Հայաստանի նկատմամբ ձեռնարկվելիք գործողությունները, (ii) ՀՄԿ այն Հատկացումների վերադարձի ապահովման գործընթացը, որոնք դեռ չեն ելքագրվել Թույլատրելի հաշվից վավեր Վերահատկացման միջոցով և այլ կերպ չեն պարտավորեցվել Համաձայնագրի 5.4(ե) բաժնի համաձայն, և (iii) ՀՄՀ-Հայաստանի, Ծրագրի, սույն Կառավարման Համաձայնագրի և Համաձայնագրի գործողության ավարտմանն առնչվող ցանկացած այլ խնդիր:

Բաժին 2.0. Դադարեցում, կասեցում:

(ա) ՀՄԿ-ն իրավասու է ամբողջությամբ դադարեցնել սույն Կառավարման Համաձայնագիրը՝ Կողմերին երեսուն (30) օր առաջ այդ մասին տալով գրավոր ծանուցում:

(բ) Չնայած սույն Կառավարման Համաձայնագրի կամ ՀՄԿ-ի և Կառավարության (կամ վերջինիս հետ Փոխկապակցված որևէ անձի) միջև կնքված որևէ այլ Լրացուցիչ համաձայնագրի այլ դրույթներին, ՀՄԿ-ն իրավասու է մասամբ կամ ամբողջությամբ կասեցնել կամ դադարեցնել սույն Կառավարման Համաձայնագիրը, ինչպես նաև սույնին առնչվող ցանկացած պարտավորություն կամ ենթապարտավորություն, այդ մասին գրավոր ծանուցում տալով ՀՄՀ-Հայաստանին և Նախարարությանը, եթե ՀՄԿ-ն պարզում է, որ.

(i) Համաձայնագրի ժամկետը սպառվել է, կամ Համաձայնագիրն ամբողջությամբ կամ մասամբ կասեցվել կամ դադարեցվել է Համաձայնագրի 5.4 բաժնի համաձայն՝ *սակայն պայմանով, որ* սույն Կառավարման Համաձայնագիրն ուժի մեջ է մնում Համաձայնագրի դադարեցումից կամ

սպառվելուց հետո հարյուր քսան (120) օր կամ որևէ այլ ժամկետ, որը կարող է որոշվել ՀՄԿ-ի կողմից 5.1 բաժնի համաձայն,

(ii) տեղի է ունեցել ցանկացած իրադարձություն, որը Համաձայնագրի կամ ՀՄԿ ֆինանսավորման դադարեցման կամ կասեցման հիմք կլիներ Համաձայնագրի 5.4 բաժնի համաձայն, կամ

(iii) տեղի է ունեցել ցանկացած այլ իրադարձություն, կամ ծագել ցանկացած այլ հանգամանք, որը ՀՄԿ-ի բացառիկ կարծիքով հանդիսանում է էական բացասական փոփոխություն (Հատկացումների համաձայնագրով նախատեսված իմաստով):

Բաժին 3.0. Դադարեցման ազդեցությունը: Անկախ սույն V հոդվածի համաձայն սույն Կառավարման Համաձայնագրի ժամկետը լրանալուց, կասեցումից կամ դադարեցումից, սույն Կառավարման Համաձայնագրի հետևյալ դրույթները պահպանում են ուժը և շարունակում գործել. Բաժիններ 1.5, 2.5, 4.2, 5.3, 6.2, 6.4, 6.6, 6.7, 6.8, 6.10 և 6.11:

ՀՈԴՎԱԾ VI ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Բաժին 1.0. Երաշխավորություններ և հավաստիացումներ:

(ա) ՀՄՀ-Հայաստանը սույնով երաշխավորում և հավաստիացնում է ՀՄԿ-ին, որ Ուժի մեջ մտնելու ամսաթվի դրությամբ ՀՄՀ-Հայաստանն ունի սույն Կառավարման Համաձայնագիրը և սույնով նախատեսված ցանկացած այլ պայմանագիր, հավաստագիր կամ փաստաթուղթ կնքելու և վավերացնելու, ինչպես նաև սույնով և դրանցով նախատեսված իր պարտավորությունները կատարելու համար պահանջվող իրավունքները և լիազորությունները: ՀՄՀ-Հայաստանի կողմից սույն Կառավարման Համաձայնագրի և դրանով նախատեսված գործառնությունների կնքումը, վավերացումը և կատարումը. (i) պատշաճ կերպով լիազորվել է անհրաժեշտ բոլոր գործողությունների կատարմամբ, և (ii) չի առաջացնում հետևյալի խախտում. (Ա) Հայաստանի որևէ կիրառելի օրենսդրության, կամ (Բ) ՀՄՀ-Հայաստանի որևէ պարտավորության: Չի պահանջվում որևէ անձի, կազմակերպության կամ կառավարական մարմնի համաձայնություն, թույլտվություն, հաստատում, գրանցում կամ հաշվառում կամ որևէ այլ գործողություն, որպեսզի կնքվի և ուժի մեջ մտնի սույն Կառավարման Համաձայնագիրը: Սույն Կառավարման Համաձայնագիրը վավեր և պարտադիր համաձայնություն է, ինչպես նաև՝ ՀՄՀ-Հայաստանի պարտավորությունն, որն իրավական կարգով ենթակա է կիրարկման:

(բ) Նախարարությունը սույնով երաշխավորում և հավաստիացնում է ՀՄԿ-ին, որ Ուժի մեջ մտնելու ամսաթվի դրությամբ Նախարարությունն ունի Կառավարության անունից սույն Կառավարման Համաձայնագիրը և սույնով նախատեսված ցանկացած այլ պայմանագիր, հավաստագիր կամ փաստաթուղթ կնքելու և վավերացնելու, ինչպես նաև սույնով և դրանցով նախատեսված իր պարտավորությունները կատարելու համար պահանջվող իրավունքները և լիազորությունները: Նախարարության կողմից սույն Կառավարման Համաձայնագրի կնքումը, վավերացումը և կատարումը. (i) պատշաճ կերպով լիազորվել է Կառավարության կողմից անհրաժեշտ բոլոր գործողությունների կատարմամբ, և (ii) չի առաջացնում հետևյալի խախտում. (Ա) Հայաստանի որևէ կիրառելի օրենսդրության, կամ (Բ) Նախարարության, Կառավարության, Կառավարության հետ փոխկապակցված որևէ անձի կամ որևէ այլ Թույլատրելի լիազորված ներկայացուցչի որևէ պարտավորության: Չի պահանջվում որևէ կառավարական մարմնի համաձայնություն, թույլտվություն, հաստատում, գրանցում կամ հաշվառում կամ որևէ այլ գործողություն, որպեսզի կնքվի և ուժի մեջ մտնի սույն Կառավարման Համաձայնագիրը: Սույն Կառավարման Համաձայնագիրը վավեր և պարտադիր համաձայնություն է, ինչպես նաև՝ Կառավարության անունից գործող՝ Նախարարության պարտավորությունն, որն իրավական կարգով ենթակա է կիրարկման:

Բաժին 2.0. Գաղտնիություն: Ծրագրին վերաբերող բոլոր փաստաթղթերը, հաշվետվությունները, ծախսային նախահաշիվները, տեխնիկական տվյալները և տեղեկությունները, որոնք այլ պարագայում հրապարակայնորեն հասանելի չեն, պետք է ողջամիջ և պատշաճ կերպով, մասնագիտական չափանիշներին համապատասխան գաղտնի պահվեն Նախարարության և ՀՄՀ-Հայաստանի կողմից՝ սակայն պայմանով, որ բոլոր այդ փաստաթղթերը, հաշվետվությունները, ծախսային նախահաշիվները, տեխնիկական տվյալները և այլ տեղեկությունները կարող են ՀՄԿ-ի կողմից տրամադրվել ՀՄԿ-ի որևէ աշխատակցի, կապալառուի, գործակալի կամ ներկայացուցչի, Գլխավոր տեսուչին, Ընդհանուր հաշվետվողականության գրասենյակին կամ ՀՄԿ-ի որոշմամբ այլ անձանց՝ սակայն մեկ այլ պայմանով, որ ՀՄՀ-Հայաստանն իրավասու է իր ինտերնետային կայքում տեղադրել կամ այլ կերպ հանրությանը մատչելի դարձնել որոշակի տեղեկություններ, ներառյալ եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները: Եվ Նախարարությունը, և ՀՄՀ-Հայաստանը պարտավոր են ապահովել, որպեսզի համապատասխան Կողմին տրամադրված կամ սույն Կառավարման Համաձայնագրի և Ծրագրի առնչությամբ այլ կերպ մշակված փաստաթղթերը, հաշվետվությունները, ծախսային նախահաշիվները, տեխնիկական տվյալները և տեղեկությունները հասանելի լինեն միայն այն անձանց, ում անհրաժեշտ է դրանց մասին իմանալ, ընդ որում՝ այդ անձանց նկատմամբ պետք է տարածվեն գաղտնիության նմանատիպ պարտավորություններ: ՀՄՀ-Հայաստանը պարտավոր է ապահովել, որպեսզի յուրաքանչյուր Անդամ, ինչպես նաև Կառավարման գրասենյակի յուրաքանչյուր պաշտոնյա և աշխատակից կատարի սույն **6.2** բաժնով նախատեսված գաղտնիության պահպանման պարտավորությունները: ՀՄՀ-Հայաստանը պարտավոր է սույն **6.2** բաժնով նախատեսվածներին նման գաղտնիության պարտավորություններ ներառել Կառավարման գրասենյակի յուրաքանչյուր ղեկավարի և աշխատակցի աշխատանքային պայմանագրերում:

Բաժին 3.0. Հաղորդակցություն: Սույն Կառավարման Համաձայնագրի շրջանակներում որևէ Կողմի պահանջած, թույլատրած կամ ներկայացրած բոլոր ծանուցումները, հավաստագրերը, հայտերը, հաշվետվությունները, հաստատումները, փաստաթղթերը և այլ հաղորդագրությունները. (ա) պետք է լինեն գրավոր, (բ) պետք է լինեն անգլերեն, և (գ) կհամարվեն պատշաճ կերպով տրված. (i) երբ անձամբ տրամադրվեն ծանուցվող Կողմին կամ Կողմերին, (ii) երբ ուղարկվեն հաստատվող ֆաքսիմիլային կապով կամ էլեկտրոնային փոստով, եթե ուղարկվում են ստացող Կողմի սովորական աշխատանքային ժամերի ընթացքում, իսկ եթե ոչ՝ ապա հաջորդ աշխատանքային օրը (այդ ուղարկումից հետո բնօրինակն ուղարկելով սովորական փոստով), կամ (iii) մեկօրյա տեղափոխման միջազգայնորեն ճանաչված սուրհանդակ կազմակերպությանը հանձնվելուց երկու **(2)** աշխատանքային օր անց՝ հանձնման ժամանակ նշելով առաքում հաջորդ օրվա ընթացքում և պահանջելով ստացման գրավոր հավաստում ուղարկող Կողմին կամ Կողմերին, որի մասին

Ծանուցումը պետք է տրվի ստորև նշված հասցեով, կամ որևէ այլ հասցեով, որի մասին այդ Կողմը կարող է ծանուցել մյուս Կողմին.

Նախարարությանը.

Հայաստանի Հանրապետության Կառավարության աշխատակազմ
Նախարար Մանուկ Թոփուզյանին`

Կառավարության Աշխատակազմի Գրասենյակ

Կառավարության Շենք

Երևան **0010** Հայաստանի Հանրապետություն

Հեռ. +374 10 520933

Ֆաքս. +347 10 529443

ՀՄԿ-ն.

Հազարամյակի Մարտահրավեր Կորպորացիա

Փոխտնօրենին, պատճեն գլխավոր իրավախորհրդատուին

ԱՄՆ, Վաշինգտոն

Տասնհինգերորդ փ. 875, Հյուսիս-Արևմուտք

հեռ: **+1 (202) 521-3600**

ֆաքս: **+1 (202) 521-3701**

Էլ-փոստ: **VPOperations@mcc.gov** (փոխտնօրենի);

VPGeneralCounsel@mcc.gov (գլխավոր իրավախորհրդատու)

Պատճենը.

Հազարամյակի Մարտահրավեր Կորպորացիա
տնօրեն Հայաստանի գծով
ԱՄՆ դեսպանատուն
ՀՀ, Երևան **375082**
Ամերիկայի պ. **1**
հեռ` **+374 10 46 47 00**
ֆաքս` **+374 10 46 47 42**
Էլ-փոստ` **RussinA@mcc.gov**
ՀՄՀ-Հայաստանին.

“Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ Հայաստան” ՊՈԱԿ
Ուշադրություն. Գլխավոր գործադիր տնօրեն
Արա Հովսեփյանին
ՀՀ Էկոնոմիքային եւ ֆինանսների Նախարարություն
Մելիք Ադամյան փ. **1**
Երեւան **0010** ՀՀ
Հեռ. +374 10 595328
Ֆաքս. +374 10 543170
Էլ-փոստ. **hovsepyana@mca.am**

Երբ սույն Կառավարման Համաձայնագրի դրույթների համաձայն ծանուցում տալու կամ որևէ գործողություն կատարելու ժամանակը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա այդ ժամանակը երկարաձգվում է մինչև հաջորդող աշխատանքային օրը:

Բաժին 4.0. Փոխանցում: ՀՄԿ-ն իրավասու է սույն Կառավարման Համաձայնագրով նախատեսված իր իրավունքները և պարտավորություններն ամբողջությամբ կամ մասամբ փոխանցել, պատվիրակել կամ ենթակապալով հանձնել ՀՄԿ-ի որևէ Փոխկապակցված անձի, գործակալի կամ ներկայացուցչի՝ այնքանով, որքանով դա թույլատրված է Ամերիկայի Միացյալ Նահանգների օրենսդրությամբ, առանց նախապես դրա համար Նախարարության կամ ՀՄՀ-Հայաստանի համաձայնությունը ստանալու: ՀՄԿ-ն պարտավոր է այդ փոխանցումը, պատվիրակումը կամ ենթակապալն ուժի մեջ մտնելու պահին այդ մասին գրավոր ծանուցել ՀՄՀ-Հայաստանին և Նախարարությանը: Ոչ Նախարարությունը, ոչ ՀՄՀ-Հայաստանն իրավասու չեն սույն Կառավարման Համաձայնագրով նախատեսված իրենց իրավունքները կամ պարտավորությունները փոխանցել, պատվիրակել կամ ենթակապալով հանձնել որևէ մեկին՝ առանց նախապես ՀՄԿ-ի գրավոր համաձայնությունը ստանալու:

Բաժին 5.0. Ներկայացուցիչներ: Սույն Կառավարման Համաձայնագրի հետ կապված բոլոր նպատակների համար Նախարարությունը ներկայացվելու է հանձինս Կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի պաշտոնը զբաղեցնող կամ այդ պաշտոնի ժամանակավոր պաշտոնակատար անձի (“**Նախարարության գլխավոր ներկայացուցիչ**”), ՀՄԿ-ն ներկայացվելու է հանձինս Գործառնությունների դեպարտամենտի Փոխնախագահի պաշտոնը զբաղեցնող կամ այդ պաշտոնի ժամանակավոր պաշտոնակատար անձի (“**ՀՄԿ-ի գլխավոր ներկայացուցիչ**”), իսկ ՀՄՀ-Հայաստանը ներկայացվելու է հանձինս ՀՄՀ-Հայաստանի Գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնը զբաղեցնող կամ այդ պաշտոնի ժամանակավոր պաշտոնակատար անձի (“**ՀՄՀ-Հայաստանի գլխավոր ներկայացուցիչ**,” իսկ Նախարարության գլխավոր ներկայացուցիչի և ՀՄԿ-ի գլխավոր ներկայացուցիչի հետ միասին՝ “**Գլխավոր ներկայացուցիչներ**”), որոնցից յուրաքանչյուրը կարող է գրավոր ծանուցում տալուց հետո մեկ կամ մի քանի լրացուցիչ ներկայացուցիչների նշանակել (յուրաքանչյուրը՝ “**Լրացուցիչ ներկայացուցիչ**”) բոլոր նպատակների համար, բացառությամբ սույն Կառավարման Համաձայնագրում փոփոխությունների ստորագրման: Յուրաքանչյուր կողմի գլխավոր ներկայացուցիչի և համապատասխան Լրացուցիչ ներկայացուցիչների անունները պետք է ստորագրությունների նմուշների հետ մեկտեղ տրամադրվեն համապատասխանաբար մյուս Կողմերից յուրաքանչյուրին: Կողմերը կարող են որպես պատշաճ կերպով ստորագրված ընդունել այդ Գլխավոր կամ Լրացուցիչ ներկայացուցիչների ստորագրած ցանկացած փաստաթուղթ, որը կապված է սույն Կառավարման Համաձայնագրի իրագործման հետ, քանի դեռ չի ստացել նրանց լիազորությունների դադարեցման մասին գրավոր ծանուցում: Կողմն իրավասու է փոխարինել սույն Կառավարման Համաձայնագրով իր Գլխավոր ներկայացուցիչին նոր ներկայացուցչով՝ գրավոր այդ մասին ծանուցելով մյուս Կողմին, որի դեպքում ծանուցումը պետք է ներառի նոր Գլխավոր ներկայացուցչի ստորագրության նմուշը:

Բաժին 6.0. Միջազգային համաձայնագիր: Կողմերը համաձայնվում և ընդունում են, որ սույն Կառավարման Համաձայնագիրը միջազգային համաձայնագիր է, որը կնքվել է Համաձայնագիրն ի կատար ածելու նպատակով:

Բաժին 7.0. Խորհրդափոխանակություն: Ցանկացած կողմ իրավասու է ցանկացած ժամանակ պահանջել խորհրդափոխանակություն Կողմերի միջև՝ կապված սույն Կառավարման Համաձայնագրի մեկնաբանման կամ իրագործման հետ: Նման խորհրդափոխանակությունը պետք է սկսվի հնարավորին չափ շուտ: Խորհրդափոխանակություն անցկացնելու մասին դիմումի մեջ պետք է նշվի դիմող Կողմի ներկայացուցիչը, որն իրավասու է խորհրդափոխանակությանը մասնակցել, իսկ մյուս Կողմերը պետք է փորձեն նշանակել համարժեք կամ համեմատելի պաշտոնական աստիճանի ներկայացուցիչների: Եթե այդ ներկայացուցիչներն անկարող են խնդիրը լուծել խորհրդափոխանակության սկզբից հետո քսան (20) օրվա

ընթացքում, ապա Կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է խորհրդափոխանակությունը ներկայացնել իր Գլխավոր ներկայացուցչին կամ համարժեք կամ համեմատելի պաշտոնական աստիճան ունեցող այլ ներկայացուցչի: Խորհրդափոխանակությունը չպետք է տևի սկսվելու օրվանից հետո քառասուն հինգ (45) օրվանից ավել: Եթե խնդիրն այդ ժամկետում չի լուծվում, ապա ՀՄԿ-ն կարող է դադարեցնել սույն Կառավարման Համաձայնագիրը՝ այդ մասին գրավոր ծանուցում տալով ՀՄՀ-Հայաստանին և Նախարարությանը: Կողմերը պարտավոր են խորհրդափոխանակությանը մասնակցելիս առաջնորդվել Համաձայնագրի նպատակը ժամանակին և ծախսային առումով արդյունավետորեն կատարելու սկզբունքով:

Բաժին 8.0. ՀՄԿ-ի կարգավիճակը: Եվ ՀՄՀ-Հայաստանը, և նախարարությունն ընդունում են և համաձայնվում, որ ՀՄԿ-ն Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարական կորպորացիա է, որը գործում է Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության անունից՝ Համաձայնագրի կատարման ուղղությամբ: Որպես այդպիսին, ՀՄԿ-ն սույն Կառավարման Համաձայնագրի շրջանակներում որևէ պատասխանատվություն չի կրում և անձեռնմխելի է սույն Կառավարման Համաձայնագրից կամ սույն Կառավարման Համաձայնագրի առնչությամբ ծագող ցանկացած վարույթի կամ հայցի նկատմամբ: Սույն Կառավարման Համաձայնագրից կամ սույն Կառավարման Համաձայնագրի առնչությամբ ծագող հարցերում ՀՄԿ-ի նկատմամբ չի տարածվում Հայաստանի կամ որևէ այլ իրավական համակարգի դատարանների կամ այլ դատական կամ այլ մարմինների իրավագործությունը:

Բաժին 9.0. Կողմերի փոխհարաբերությունները: Սույն Կառավարման Համաձայնագիրը Կողմերի միջև չի ստեղծում համատեղ ձեռնարկություն, գործընկերություն կամ նմանատիպ որևէ այլ հարաբերություն:

Բաժին 10.0. Փոփոխում, հրաժարում: Կողմերն իրավասու են փոփոխել սույն Կառավարման Համաձայնագիրը՝ կնքելով սույն Կառավարման Համաձայնագրի գրավոր փոփոխություններ, որոնք պետք է ստորագրված լինեն Կողմերի Գլխավոր ներկայացուցիչների կողմից: Կողմերը նաև համաձայնվում են, որ սույն Կառավարման Համաձայնագրի որևէ խախտման կամ չկատարման դեպքում Կողմի տված որևէ ներումը, համաձայնությունը կամ թույլտվությունը, ինչպես նաև սույն Կառավարման Համաձայնագրի և Համաձայնագրի որևէ այլ փաստաթղթի որևէ դրույթով նախատեսված պահանջից հրաժարումը կամ պահանջի կատարման հետաձգումը պետք է լինի գրավոր և ուժ կունենա միայն այնքանով, որքանով այնտեղ ուղղակիորեն գրավոր կերպով նշված կլինի: Սույն Կառավարման Համաձայնագրով, օրենքով կամ այլ կերպ Կողմերի համար նախատեսված իրավական պաշտպանության բոլոր միջոցները կուտակային են, այլ ոչ՝ այլընտրանքային:

Բաժին 11.0. Իրավական պաշտպանությունից չհրաժարումը: Կողմերը համաձայնվում են, որ որևէ Կողմի վերապահված որևէ իրավունքի, լիազորության կամ իրավական պաշտպանության միջոցի օգտագործման ուշացումը կամ բացթողումը, եթե սույն Կառավարման Համաձայնագրի մյուս Կողմերից մեկը թույլ է տվել խախտում կամ չի կատարել իր պարտավորությունները, չի սահմանափակում այդ իրավունքը, լիազորությունը կամ իրավական պաշտպանության միջոցը, և չի կարող մեկնաբանվել որպես տվյալ խախտման կամ պարտավորությունների չկատարման, կամ ապագայում տեղի ունեցող նմանատիպ խախտումների կամ չկատարման դեպքերի ներում, կամ համաձայնություն այդ խախտմանը կամ չկատարմանը:

Բաժին 12.0. Առդիրները: Սույնի որևէ ուղղակի հավելված, առդիր կամ այլ կից փաստաթուղթ (հավաքաբար՝ “**Առդիրներ**”) համարվում է հղումով սույնի մաս դարձված և հանդիսանում սույն Կառավարման Համաձայնագրի անբաժանելի մաս:

Բաժին 13.0. Վերնագրեր: Սույն Կառավարման Համաձայնագրում օգտագործված Բաժինների և Ենթաբաժինների վերնագրերը ներառված են միայն հարմարության համար և չեն կարող հաշվի առնվել սույն Կառավարման Համաձայնագիրը մեկնաբանելու ընթացքում:

Բաժին 14.0. Ամբողջ համաձայնությունը: Սույն Կառավարման Համաձայնագիրը, ներառյալ բոլոր Հավելվածները, ինչպես նաև սույն Կառավարման Համաձայնագրի կապակցությամբ և ի կատարում սույն Կառավարման Համաձայնագրի կնքված և հաստատված բոլոր հավաստագրերը, փաստաթղթերը կամ համաձայնագրերը կնքվելու և կատարվելու պահից հանդիսանում են Կողմերի ամբողջ համաձայնությունը սույն Կառավարման Համաձայնագրի խնդրո առարկայի շուրջ, որը գերակայում է և ուժը կորցրած դարձնում սույն Կառավարման Համաձայնագրի խնդրո առարկայի վերաբերյալ մինչ այդ եղած բոլոր համաձայնությունները, պայմանավորվածությունները, հավաստիացումները և երաշխավորությունները:

Բաժին 15.0. Հավասարազոր օրինակներ, ստորագրություններ: Սույն Կառավարման Համաձայնագիրը կարող է կնքվել մեկ կամ մի քանի հավասարազոր ստորագրված օրինակներով, և այդ կերպ կնքված և ստորագրված յուրաքանչյուր օրինակ հանդիսանում է բնօրինակ, սակայն բոլոր հավասարազոր օրինակները միասին հանդիսանում են միևնույն մեկ համաձայնագիր: Կնքվելու են սույն Կառավարման Համաձայնագրի հինգ բնօրինակներ: Եթե կողմերը գրավոր այլ համաձայնության չեն եկել, ապա ֆաքսիմիլով կամ էլեկտրոնային փոստով սույնի **6.3** Բաժնի համաձայն դրված ստորագրությունը համարվում է ստորագրության բնօրինակ, և Կողմերը սույնով հրաժարվում են նման ստորագրությունների կամ դրանց օրինական ուժի, վավերության կամ գործողության հիման վրա կնքված

համաձայնության օրինականության վերաբերյալ որևէ առարկություն ներկայացնելու իրավունքից, եթե առարկության միակ հիմքը ստորագրության` ֆաքսիմիլով կամ էլեկտրոնային տեսքով դրված լինելն է: Նման ստորագրությունը ստացող Կողմը պետք է ընդունի որպես ստորագրության բնօրինակ, որը պարտադիր է այն դեպքում Կողմի համար:

Բաժին 6.1. Արգելված գործողություններ:

(ա) Նախարարությունը և ՀՄՀ-Հայաստանը սույնով հաստատում են, որ Ծրագրի կապակցությամբ որևէ երրորդ անձի չեն կատարվել որևէ վճարումներ, որոնք խախտում են շահերի բախման և բարոյականության մասին կանոնակարգերը և Հայաստանի օրենսդրության հարակից դրույթները, և պարտավոր են ապահովել, որպեսզի նման վճարումներ չկատարվեն: Նախարարությունը և ՀՄՀ-Հայաստանը հաստատում են, որ Նախարարության կամ ՀՄՀ-Հայաստանի որևէ աշխատակից, գործակալ կամ ներկայացուցիչ Համաձայնագրի շրջանակներում ֆինանսավորված կամ ֆինանսավորվելիք ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների գնման առնչությամբ չի ստացել որևէ վճարում, և ապահովելու է նման վճարումների չստացումը Նախարարության կամ ՀՄՀ-Հայաստանի որևէ աշխատակցի, գործակալի կամ ներկայացուցչի կողմից: ՀՄՀ-Հայաստանը պարտավոր է ապահովել, որպեսզի յուրաքանչյուր Անդամ, ինչպես նաև Կառավարման գրասենյակի յուրաքանչյուր պաշտոնյա և աշխատակից հետևի **6.16(ա)** բաժնով նախատեսված` որոշ անձանց վճարումներ կատարելու արգելքի մասին պահանջին: ՀՄՀ-Հայաստանը պարտավոր է սույն **6.16(ա)** բաժնով նախատեսվածներին նման արգելքներ ներառել Կառավարման գրասենյակի բոլոր պաշտոնյաների և աշխատակիցների աշխատանքային պայմանագրերում:

(բ) Նախարարությունը և ՀՄՀ-Հայաստանը պարտավոր են ապահովել, որպեսզի Նախարարության կամ ՀՄՀ-Հայաստանի որևէ աշխատակից, գործակալ, անդամ, ղեկավար կամ ներկայացուցիչ (յուրաքանչյուրը` **“Փոխկապակցված անձ”**) չմասնակցի որևէ պայմանագրի, դրամաշնորհի կամ այլ հնարավորության կամ գործարքի ընտրության, կնքման կամ իրականացման, որը մասամբ կամ ամբողջությամբ (ուղղակիորեն կամ անուղղակիորեն) ֆինանսավորվում է ՀՄԿ ֆինանսավորմամբ, և որում. (i) այդ փոխկապակցված անձը, նրա անմիջական ընտանիքի կամ տնային տնտեսության անդամները կամ նրա գործարար գործընկերները կամ նրա կողմից հսկվող կամ նրա զգալի մասնակցությունն ունեցող կազմակերպություններն ունի կամ ունեն ֆինանսական կամ այլ շահ, կամ (ii) այդ փոխկապակցված անձը բանակցում է կամ արդեն պայմանավորվածություն ունի հնարավոր աշխատանքային հարաբերությունների վերաբերյալ, բացառությամբ երբ նա գրավոր տեղեկացրել է ՀՄՀ-Հայաստանին և ՀՄԿ-ին շահերի բախման վերաբերյալ, և տեղեկացումից հետո ՀՄՀ-Հայաստանը և ՀՄԿ-ն գրավոր տվել են իրենց համաձայնությունը շարունակելու վերաբերյալ`

անկախ շահերի բախումից: Եւ Նախարարությունը, և ՀՄՀ-Հայաստանը համաձայնվում են, որ իրենք չեն կատարելու հետևյալ գործողությունները, և ապահովելու են, որպեսզի իրենց հետ փոխկապակցված անձինք չկատարեն հետևյալ գործողությունները (ինչպես նաև պետք է փորձեն ապահովել, որպեսզի մասամբ կամ ամբողջությամբ (ուղղակիորեն կամ անուղղակիորեն) ՀՄԿ-ի կողմից ֆինանսավորվող որևէ պայմանագրի, դրամաշնորհի կամ այլ հնարավորության կամ գործարքի ընտրության, կնքման, կառավարման, վերահսկման կամ իրականացման մասնակից որևէ այլ անձ կամ սուբյեկտ չկատարի հետևյալ գործողությունները). (x) պահանջել կամ ընդունել կամ առաջարկել երրորդ անձի, կամ փորձել ստանալ կամ ուղղակիորեն կամ անուղղակիորեն իր կամ որևէ այլ անձի կամ սուբյեկտի անունից խոստում ընդունել որևէ նվեր, ընծա, լավություն կամ օգուտ, բացառությամբ նվազագույն (“*de minimis*”) արժեք ունեցողների կամ այլ առումներով ՀՄԿ-ի կողմից ժամանակ առ ժամանակ տրամադրվող ուղենիշներին համապատասխանողների, կամ (y) չկատարել որևէ գործողություն, որը հանդիսանում է շահերի բախում կամ շահերի բախման տպավորություն թողնում: ՀՄՀ-Հայաստանը պարտավոր է սույն **6.16(բ)** բաժնում ներառված՝ շահերի բախման մասին դրույթների նման դրույթներ ներառել Կառավարման գրասենյակի բոլոր ղեկավարների և աշխատակիցների աշխատանքային պայմանագրերում:

Բաժին 6.2. Անգլերեն լեզուն: Սույն Կառավարման Համաձայնագիրը կազմվելու և կնքվելու է անգլերեն, և անպարզությունների կամ պաշտոնական անգլերեն տարբերակի և Կողմերի հարմարավետության համար հայերեն թարգմանված որևէ այլ տարբերակի միջև հակասությունների դեպքում գերակայում է պաշտոնական անգլերեն տարբերակը:

Բաժին 6.3. Մեկնաբանումը: Սույն Կառավարման Համաձայնագիրը մեկնաբանելիս պետք է հետևել մեկնաբանման հետևյալ կանոններին.

- (ա) Եզակիով բառերը ներառում են նաև հոգնակին, և հակառակը,
- (բ) Ֆիզիկական անձանց կամ կողմերի մասին խոսելիս ներառվում են նաև ֆիրմաները և իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպությունները,
- (գ) Իգական սեռով օգտագործված բառերը ներառում են նաև արականը, և հակառակը,
- (դ) “ներառել”, “ներառյալ” և դրանց այլ համադրությունները նշանակում են “ներառում է, սակայն չի սահմանափակվում”, համապատասխան համադրություններով,

(ե) բացառությամբ երբ սույնով ուղղակիորեն նախատեսված է, սույն Կառավարման Համաձայնագրում պայմանագրերի, համաձայնագրերի կամ այլ փաստաթղթերի վրա արված բոլոր հղումները համարվում են հղումներ այդ պայմանագրերի, համաձայնագրերի կամ այլ փաստաթղթերի վրա՝ դրանցում պարբերաբար կատարվող փոփոխություններով և լրացումներով հանդերձ,

(զ) կիրառելի օրենսդրության վրա արված ցանկացած հղում պետք է մեկնաբանվի որպես հղում կիրառելի օրենսդրության վրա՝ դրանում պարբերաբար կատարված փոփոխություններով, լրացումներով, երկարաձգումներով կամ նոր խմբագրություններով հանդերձ, և ներառում են ցանկացած ենթաօրենսդրությունը, կանոնները կամ կանոնակարգերը, որոնք ընդունվել են կիրառելի օրենսդրության հիման վրա, ինչպես նաև այդ օրենսդրության հիման վրա ընդունված կամ այլ կերպ գործող բոլոր արձանագրությունները, կանոնագրքերը, հռչակագրերը և հրամանները,

(է) “սույնի”, “սույնով”, “սույնից”, “սույնի համաձայն” և նմանատիպ ծագման այլ բառերը վերաբերում են ամբողջությամբ սույն Կառավարման Համաձայնագրին, այլ ոչ՝ դրա որևէ կոնկրետ Հոդվածի, Բաժնի, Հավելվածի կամ այլ մասի,

(ը) “աշխատանքային օրեր”-ի վրա կատարված ցանկացած հղում նշանակում է բոլոր օրերը, բացառությամբ շաբաթ և կիրակի օրերի, Հայաստանի մայրաքաղաք Երևանում կամ Ամերիկայի Միացյալ Նահանգների մայրաքաղաք Վաշինգտոն քաղաքում առևտրային բանկերի համար ընդունված տոն օրերի և Հայաստանում կամ Ամերիկայի Միացյալ Նահանգներում ազգային/ֆեդերալ տոների, իսկ “օր” բառը ցանկացած դեպքում օգտագործվելիս նշանակում է “օրացուցային օր”, և

(թ) “ամիս”, “եռամսյակ” կամ “տարի” բառերի վրա կատարված ցանկացած հղում պետք է ունենա այդ բառերին տրվող ընդհանուր սովորական իմաստը՝ ըստ Գրիգորյան օրացուցային տարվա, որը սկսվում է հունվարի 1-ին և ավարտվում դեկտեմբերի 31-ին և բաժանվում է չորս մոտավորապես հավասար եռամսյակների, որոնցից յուրաքանչյուրը սկսվում է համապատասխան օրացուցային տարվա հունվարի 1-ին, ապրիլի 1-ին, հուլիսի 1-ին և հոկտեմբերի 1-ին:

[հաջորդիվ՝ ստորագրությունների էջը]

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՈԳՐՅԱԼԻ, Կողմերից յուրաքանչյուրը կնքել է սույն Կառավարման Համաձայնագիրը պատշաճ կերպով լիազորված ներկայացուցչի միջոցով՝ վերևում նշված առաջին ամսաթվի և տարեթվի դրությամբ:

ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ

Ստորագրություն. _____
Անուն. Ջոն Հյուբո
Պաշտոն. Փոխ-տնօրեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ,
Հայաստանի Հանրապետության Կառավարության անունից.

Ստորագրություն. _____
Անուն. Մանուկ Թովուգյան
Պաշտոն. Ղեկավար-Նախարար

**“ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՀԱՅԱՍՏԱՆ” ՊԵՏԱԿԱՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

Ստորագրություն. _____
Անուն. Արա Հովսեփյան
Պաշտոն. Գլխավոր Տնօրեն

Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի, Հայաստանի Հանրապետության Կառավարության ի դեմս Հայաստանի Հանրապետության Կառավարության աշխատակազմի, և Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ Հայաստան ՊՈԱԿ-ի միջև կնքված Կառավարման համաձայնագրի ստորագրությունների էջ:

ԱՌԴԻՐ Ա

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

“Լրացուցիչ ներկայացուցիչ” ունի **6.5** բաժնով նախատեսված իմաստը:

“Փոխկապակցված անձ” ունի **6.16(բ)** բաժնով նախատեսված իմաստը:

“Համաձայնագիր” ունի սույն Կառավարման Համաձայնագրի Ներածականով նախատեսված իմաստը:

“Առդիրներ” ունի **6.12** բաժնով նախատեսված իմաստը:

“Առուղիս” ունի **4.7(զ)** բաժնով նախատեսված իմաստը:

“Խորհրդի որոշում” ունի **1.6(զ)** բաժնով նախատեսված իմաստը:

“ԳԳՏ” կամ “Գլխավոր գործադիր տնօրեն” նշանակում է ՀՄՀ-Հայաստանի գլխավոր գործադիր տնօրենը, որն ունի **2.3** բաժնով նախատեսված պարտավորությունները:

“ԳՖՏ” կամ “Գլխավոր ֆինանսական տնօրեն” ունի **2.1** բաժնով նախատեսված իմաստը:

“Նախագահ” ունի **1.3(ա)** բաժնով նախատեսված իմաստը:

“Կանոնադրություն” նշանակում է ՀՄՀ-Հայաստանի կանոնադրությունը, որը հաստատվել է Կառավարության **13** ապրիլի **2006**թ.-ի թիվ **487**-Ն որոշմամբ, **6** հուլիսի **2006**թ.-ի թիվ **1008**-Ն որոշմամբ հաստատված փոփոխություններով:

“Անդամներ քաղաքացիական հասարակության կողմից” ունի **1.2(բ)** բաժնով նախատեսված իմաստը:

“Համաձայնագիր” ունի սույն Կառավարման Համաձայնագրի Ներածականով նախատեսված իմաստը:

“Համաձայնագրի նպատակ” ունի Համաձայնագրի “Ա” առդիրով նախատեսված իմաստը:

“Համաձայնագրի հաշվետվություններ” ունի Համաձայնագրի “Ա” առդիրով նախատեսված իմաստը:

“Լիազորված իրավունքներ և պարտականություններ” ունի **1.6(ա)(iii)** բաժնով նախատեսված իմաստը:

Առդիր Ա-1

“Հատկացումների համաձայնագիր” ունի Համաձայնագրի “Ա” առդիրով նախատեսված իմաստը:

“Ուժի մեջ մտնելու ամսաթիվ” ունի 5.1(ա) նախատեսված իմաստը:

“ԲՄԱ ծրագրի ղեկավար” ունի 2.1 բաժնով նախատեսված իմաստը:

“Ֆինանսական հաշվետվողականության պլան” ունի Համաձայնագրի “Ա” առդիրով նախատեսված իմաստը:

“Ֆինանսական գործակալ” ունի Համաձայնագրի “Ա” առդիրով նախատեսված իմաստը:

“Գլխավոր իրավախորհրդատու” ունի 2.1 բաժնով նախատեսված իմաստը:

“Կառավարման խորհուրդ” ունի 1.1 բաժնով նախատեսված իմաստը:

“Կառավարություն” ունի սույն Կառավարման Համաձայնագրի Ներածականով նախատեսված իմաստը:

“Խորհրդի անդամներ Կառավարության կողմից” ունի 1.2(ա) բաժնով նախատեսված իմաստը:

“Իրագործման պլան” ունի Համաձայնագրի “Ա” առդիրով նախատեսված իմաստը:

“Իրագործող սուբյեկտներ” ունի Համաձայնագրի “Ա” առդիրով նախատեսված իմաստը:

“Ենթակառուցվածքի բաղադրիչ” ունի Համաձայնագրի “Ա” առդիրով նախատեսված իմաստը:

“Ոռոգվող գյուղատնտեսության ենթածրագիր” ունի Համաձայնագրի “Ա” առդիրով նախատեսված իմաստը:

“Ոռոգման ԾԻԳ” ունի Համաձայնագրի “Ա” առդիրով նախատեսված իմաստը:

“Ոռոգման ենթածրագրի ղեկավար” ունի 2.1 բաժնով նախատեսված իմաստը:

“Մ և Գ պլան” ունի Համաձայնագրի “Ա” առդիրով նախատեսված իմաստը:

“Մ և Գ ծրագրի ղեկավար” ունի 2.1 բաժնով նախատեսված իմաստը:

“Կառավարման գրասենյակ” ունի 2.1 բաժնով նախատեսված իմաստը:

“**Էական բացասական փոփոխություն**” ունի Հատկացումների համաձայնագրով նախատեսված իմաստը:

“**ՀՄՀ-Հայաստան**” ունի սույն Կառավարման Համաձայնագրի Ներածականով նախատեսված իմաստը:

“**ՀՄՀ-Հայաստանի Գլխավոր ներկայացուցիչ**” ունի **6.5** բաժնով նախատեսված իմաստը:

“**ՀՄՀ-Հայաստանի ինտերնետային-կայք**” ունի Համաձայնագրի “Ա” առդիրով նախատեսված իմաստը:

“**ՀՄԿ**” ունի սույն Կառավարման Համաձայնագրի Ներածականով նախատեսված իմաստը:

“**ՀՄԿ հատկացում**” ունի Համաձայնագրի “Ա” առդիրով նախատեսված իմաստը:

“**ՀՄԿ հատկացման հայտ**” ունի Համաձայնագրի “Ա” առդիրով նախատեսված իմաստը:

“**ՀՄԿ ֆինանսավորում**” ունի Համաձայնագրի “Ա” առդիրով նախատեսված իմաստը:

“**ՀՄԿ դիտորդ**” ունի 1.4(ա)(i) բաժնով նախատեսված իմաստը:

“**ՀՄԿ Գլխավոր ներկայացուցիչ**” ունի **6.5** բաժնով նախատեսված իմաստը:

“**Անդամներ**” ունի **1.1** բաժնով նախատեսված իմաստը:

“**Նախարարություն**” ունի սույն Կառավարման Համաձայնագրի Ներածականով նախատեսված իմաստը:

“**Նախարարության Գլխավոր ներկայացուցիչ**” ունի **6.5** բաժնով նախատեսված իմաստը:

“**Ղեկավար**” ունի **2.1** բաժնով նախատեսված իմաստը:

“**Ծրագրի արտաքին կառավարիչ**” ունի Համաձայնագրի “Ա” առդիրով նախատեսված իմաստը:

“**Կողմեր**” ունի սույն Կառավարման Համաձայնագրի Ներածականով նախատեսված իմաստը:

“**Կողմ**” ունի սույն Կառավարման Համաձայնագրի Ներածականով նախատեսված իմաստը:

“Թույլատրելի լիազորված ներկայացուցիչ” ունի 4.6 բաժնով նախատեսված իմաստը:

“Գլխավոր ներկայացուցիչներ” ունի 6.5 բաժնով նախատեսված իմաստը:

“Օրագիր” ունի Համաձայնագրի “Ա” առդիրով նախատեսված իմաստը:

“Գնումային համաձայնագիր” ունի Համաձայնագրի “Ա” առդիրով նախատեսված իմաստը:

“Գնումային ուղեցույց” ունի Համաձայնագրի “Ա” առդիրով նախատեսված իմաստը:

“Գնումների ղեկավար” ունի 2.1 բաժնով նախատեսված իմաստը:

“Ենթածրագիր” ունի Համաձայնագրի “Ա” առդիրով նախատեսված իմաստը:

“Ենթածրագրի ղեկավար” ունի 2.1 բաժնով նախատեսված իմաստը:

“Մատակարար” ունի Համաձայնագրի “Ա” առդիրով նախատեսված իմաստը:

“Քվորում” ունի 1.8 բաժնով նախատեսված իմաստը:

“Վերահսակացում” ունի Համաձայնագրի “Ա” առդիրով նախատեսված իմաստը:

“Գյուղական ֆինանսավորման ծրագիր” ունի սույն Կառավարման Համաձայնագրի Բ առդիրով նախատեսված իմաստը:

“Գյուղական ճանապարհների ենթածրագրի ղեկավար” ունի 2.1 բաժնով նախատեսված իմաստը:

“Քարտուղար” ունի 2.1 բաժնով նախատեսված իմաստը:

“Շահառուների խորհուրդ” ունի 3.1 բաժնով նախատեսված իմաստը:

“Լրացուցիչ համաձայնագիր” ունի Համաձայնագրի “Ա” առդիրով նախատեսված իմաստը:

“Քվեարկող անդամներ” ունի 1.1 բաժնով նախատեսված իմաստը:

“Ջրից մինչև շուկա գործունեություն” ունի Համաձայնագրի “Ա” առդիրով նախատեսված իմաստը:

“Ջրից մինչև շուկա ենթածրագրի ղեկավար” ունի 2.1 բաժնով նախատեսված իմաստը:

Առդիր Ա-1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ, ԿՆՔՄԱՆ ԵՆԹԱԿԱՍՈՒՆԱԿ

ԱՌԴԻՐ Բ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գլխավոր գործադիր տնօրեն. տես 2.3 բաժինը:

ԲՄԱ ծրագրի ղեկավար. ԲՄԱ ծրագրի ղեկավարը գնահատում, ուսումնասիրում և մշակում է քաղաքականությունն ՀՄՀ-Հայաստանի գործունեության՝ բնապահպանական և սոցիալական իրավիճակի վրա ունեցած ազդեցության վերաբերյալ: ԲՄԱ ծրագրի ղեկավարը ապահովում է բնապահպանության վրա ազդեցության և սոցիալական ազդեցության մեղմացման բոլոր միջոցառումների (այդ թվում՝ սեռային ներկանագուցության և վերաբնակեցման) կատարումը Համաձայնագրի բոլոր աշխատանքներում՝ Համաձայնագրի և հարակից փաստաթղթերի դրույթներին համապատասխան, ինչպես նաև ծառայում է որպես ներքին փորձագետ բնապահպանության վրա ազդեցության և սոցիալական ազդեցության հիմնախնդիրների գծով:

Գլխավոր ֆինանսական տնօրեն. ԳՖՏ-ն աշխատում է ԳԳՏ-ի վերահսկողության ներքո և պատասխանատու է ՀՄՀ-Հայաստանի գործունեության բոլոր ֆինանսական խնդիրների համար՝ ապահովելով ֆինանսական կառավարման վերաբերյալ Համաձայնագրով և հարակից փաստաթղթերով նախատեսված բոլոր դրույթների կատարումը: ԳՖՏ-ն ծառայում է որպես հիմնական կապող օղակը Ֆինանսական գործակալի հետ (որը պատասխանատու է՝ ապահովելու և հավաստագրելու Վերահատկացումների պատշաճ լիազորումը և արձանագրումը սահմանված վերահսկողական ընթացակարգի համաձայն): ԳՖՏ-ն ապահովում է ՀՄԿ-ի ողջ ֆինանսավորման և այլ ֆինանսական գործառնությունների պատշաճ հաշվապահական հաշվառումը:

Գնումների ղեկավար. Գնումների ղեկավարը ապահովում է Ծրագրի շրջանակներում ՀՄՀ-Հայաստանի գնումային ընդհանուր գործունեության համապատասխանությունը Գնումային համաձայնագրով և ազգային օրենսդրությամբ նախատեսված ուղենիշներին, ինչպես նաև կառավարում է (i) Ջրից մինչև շուկա գործունեության համար Արտաքին իրագործող սուբյեկտի ծառայությունների գնումը, (ii) աուդիտորների աշխատանքը, (iii) մոնիտորինգի և գնահատման աշխատանքները, և (iv) ուղղակիորեն Կառավարման գրասենյակի գործունեությանն առնչվող գնումները: Գնումների ղեկավարը մասնակցում է կառավարման պլանավորման և հաշվետվության գործունեությանը՝ աշխատելով պլանավորման և հաշվետվության վրա գնումների վերաբերող մասով:

Առդիր Ա-2

Մ և Գ ծրագրի ղեկավար. Մ և Գ ծրագրի ղեկավարը պատասխանատու է՝ մշակելու և ուղղորդելու Մ և Գ ընդհանուր ռազմավարությունը, ծրագիրը և իրագործումը, ինչպես նաև իրականացնելու հարակից գործունեություն շՄՀ-Հայաստանի շրջանակներում, նաև՝ իր իրագործող սուբյեկտների միջոցով: Մ և Գ ծրագրի ղեկավարը պարտավոր է ժամանակին և վերաբերելի տեղեկություններ տրամադրել Կառավարության, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի շրջանակներում առկա՝ շՄՀ-Հայաստանի շահառուներին: Դա ներառում է սերտ համագործակցություն Մ և Գ մշակման ու իրագործման բոլոր մասնակիցների, ներառյալ ԳԳՏ-ի, Կառավարման խորհրդի ներկայացուցիչների, Շահառուների խորհրդի ներկայացուցիչների, շՄՀ-Հայաստանի Ծրագրի տնօրենների և, անհրաժեշտության դեպքում, այլ օժանդակ աշխատակիցների, Իրագործող սուբյեկտների Մ և Գ աշխատակիցների, Վաշինգտոնում ՀՄԿ-ի Մ և Գ աշխատակիցների, արտաքին խորհրդատուների և ՀՄԿ-ից եկող՝ Մ և Գ հետ կապված արտաքին առաքելությունների անդամների հետ:

Կառավարման խորհրդի քարտուղարը (Գլխավոր իրավախորհրդատու).

Քարտուղարը (Գլխավոր իրավախորհրդականը) պատասխանատու է շՄՀ-Հայաստանի գրասենյակում շՄՀ-Հայաստանի կորպորատիվ գրքերը և գրառումները վարելու, Կառավարման խորհրդի նիստերի մասին ծանուցում տալու, Կառավարման խորհրդի նիստերին մասնակցելու և դրանց արձանագրություններ վարելու, Քարտուղարի կողմից ստորագրման ենթակա բոլոր փաստաթղթերը ստորագրելու և շՄՀ-Հայաստանի մշակած փաստաթղթերի իսկությունը հաստատելու համար: Բացի այդ, Քարտուղարը պարտավոր է կատարել այլ պարտականություններ և լիազորություններ, որոնք ընդհանուր առմամբ բխում են կորպորատիվ քարտուղարի պաշտոնից, օրինակ, շՄՀ-Հայաստանի և վերջինիս գործունեության վրա անդրադարձող բոլոր իրավական խնդիրների վերաբերյալ Կառավարման խորհրդին, ԳԳՏ-ին և Կառավարման գրասենյակին խորհուրդներ տրամադրելը, իրավական խնդիրներ բացահայտելը և վերլուծելը, կարևոր փաստաթղթեր բանակցելը և մշակելը, առաջարկություններ ներկայացնելը և իրավական պահանջների կատարում ապահովելը:

Գյուղական ճանապարհների ենթածրագրի ղեկավար. Գյուղական ճանապարհների ենթածրագրի ղեկավարը պատասխանատու է՝ համակարգելու և վերահսկելու Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի բոլոր աշխատանքները, այդ թվում, մասնավորապես, Տրանսպորտի և կապի նախարարության ենթակայությամբ գործող՝ ՀԱՃՏ-ի (որը պատասխանատու է Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի հետ կապված գնումների, շինարարության և իրականացման համար) կողմից իրականացվող

աշխատանքները:

Ոռոգման ենթածրագրի ղեկավար. Ոռոգման ենթածրագրի ղեկավարը պատասխանատու է՝ համակարգելու և վերահսկելու Ոռոգվող գյուղատնտեսության ենթածրագրի Ենթակառուցվածքի բաղադրիչի բոլոր աշխատանքները, այդ թվում, մասնավորապես, Ոռոգման ԾԻԳ-ի (որը պատասխանատու է Ոռոգվող գյուղատնտեսության ենթածրագրի հետ կապված գնումների, շինարարության և իրականացման համար) կողմից իրականացվող աշխատանքները:

Ջրից մինչև շուկա ենթածրագրի ղեկավար. Ջրից մինչև շուկա ենթածրագրի ղեկավարը պատասխանատու է՝ համակարգելու և վերահսկելու Ոռոգվող գյուղատնտեսության ենթածրագրի Ջրից մինչև շուկա բաղադրիչի բոլոր աշխատանքները, այդ թվում, մասնավորապես. **(i)** միջազգային մրցույթով ընտրվելիք՝ Ծրագրի արտաքին կառավարչի՝ իրականացման պարտականությունները, և **(ii)** Գյուղական ֆինանսավորման ծրագրի կողմից իրականացվելիք գործունեությունը, որի նպատակն է զարգացնել վարկային կազմակերպությունների կարողությունները և ֆինանսավորում տրամադրել այդ վարկային կազմակերպություններին, որը նրանք կվերավարկավորեն անդամ ֆերմերներին և հարակից ձեռնարկություններին (**«Գյուղական ֆինանսավորման ծրագիր»**): (Գյուղական ֆինանսավորման ծրագիրը ստեղծվել է Կառավարության կողմից զարգացման վարկերի տեսքով (Համաշխարհային բանկից և Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամից) ստացվող վերաֆինանսավորումն ուղղորդելու և կառավարելու նպատակով՝ որոշակի պահանջների բավարարող ֆինանսական կազմակերպությունների միջոցով վերաֆինանսավորելով այդ վարկերը գյուղական բնակավայրերում:)

Առդիր Ա-2

ԱՌԴԻՐ Գ

ՀՄՀ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՈՐԹՅՈՒՆ

Որպես Գնումների Գործակալ, ՀՄՀ-Հայաստանի Կառավարման Գրասենյակը, պետք է պատշաճորեն վերահսկի, եւ կատարի բոլոր անհրաժեշտ ծառայությունները Օրագրի շրջանակներում ծախսված գումարների արավելագույն արդյունավետությամբ օգտագործելու համար, ապահովելով, որ բոլոր գնումային գործարքները կատարվել են ՀՄԿ Համաձայնագրով, դրա Լրացուցիչ պայմանագրերով եւ Գնումային Պայմանագրով սահմանված սկզբունքներին, կանոններին եւ ընթացակարգերին համապատասխան, որոնք սահմանում են ՀՄԿ-ի եւ Կառավարության միջեւ համաձայնեցված Գնումային Ուղեցույցով:

Որպես Գնումների Գործակալ, ՀՄՀ-Հայաստանի Կառավարման Գրասենյակն ունի երկու հիմնական գործառույթներ.

- Պետք է հանդես գա, որպես **Գործարքային գնումների գործակալ** ծառայությունների, աշխատանքների եւ ապրանքների ձեռքբերման կառավարելու համար, որոնք անհրաժեշտ են ՀՄԿ-ի Համաձայնագրով նախատեսված ծրագրերի (“**Օրագիր**”) իրականացման համար, եւ որոնք չեն կատարվի ՀԱՃՇ-ի եւ Ոռոգման ԾԻԳ-ի կողմից: Նախատեսված է, որ ՀՄՀ-Հայաստանը պետք է հանդես գա որպես Գնումների Գործակալ Ջրից մինչև շուկա ենթածրագրի ղեկավարի, Աուդիտորական Ծառայությունների, Մոնիտորինգի եւ Գնահատման Ծառայությունների, եւ ՀՄՀ-Հայաստանի կողմից պահանջվող այլ գույքերի եւ ծառայությունների համար (“**ՀՄՀ-Հայաստան Գնումներ**”):
- Պետք է վերահսկի ՀԱՃՇ-ի եւ Ոռոգման ԾԻԳ-ի կողմից կողմից կատարված գնումների գործառույթները, որոնք սահմանված են ՀՄՀ-Հայաստանի եւ համապատասխան իրականացնող կազմակերպության միջեւ կնքված Իրականացնող Կազմակերպության Պայմանագրերով:

Որպես Գործարքային գնումների գործակալ, ՀՄՀ-Հայաստանի Կառավարման Գրասենյակը պետք է.

- Արդյունավետ կառավարի եւ անցկացնի ՀՄՀ-Հայաստանի Գնումները:

Արդիւր Գ-1

- Վերլուծի շուկայական պայմանները, գնումների գործունեության հաջողությունն օպտիմիզացնելու համար:
- Հետամուտ լինի գնումների ընթացքում խնայողությունների ստացման, ինչին կարելի է հասնել գնումային հնարավորության ագրեսիվ մարքեթինգի միջոցով, բարելավված պայմաններով, եւ այլ նմանատիպ գնումների միջոցով:
- Ապահովի որ ոչ ավել քան տնտեսապես ողջամիտ գին է վճարվում Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները եւ ծառայությունները գնելու համար:
- Նախագծի, պլանավորի նումային գործառույթներին, սահմանի առաջնայնություններ:
- Ապահովի, որ գնումների նպատակները նկարագրող փաստաթղթերը, ներառյալ աշխատանքների ծավալի նկարագրությունները, պահանջների նկարագրությունները, քանակների վերաբերյալ փաստաթղթերը, ինժեներական նախագծերը եւ զծագրերը, համապատասխանորեն պատրաստված են եւ վերջնականացված ողջամիտ եւ հավասարակշռված կարգով, առանց ոչ պատշաճ սահմանափակումների:
- Գնումներն իրականացնի գործնականապես առավելագույն բաց մրցակցության պայմաններում, որպեսզի, ապահովվեն բարենպաստ գներ ՀՄՀ-Հայաստանի համար եւ հավասար եւ արդար հնարավորություններ մատակարարների եւ կապալառուների համար:
- Հետեւի մատակարարների եւ կապալառուների աշխատանքներն արագացնելու համար արված հրամաններին եւ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ գործողությունները ապահովելու համար աշխատանքի հաջող կատարումը, ներառյալ, անհրաժեշտության դեպքում, գործողություններ ուղղված վերագնումներ իրականացնելու ուղղությամբ:
- Պատրաստի պայմանագրային փաստաթղթեր, ներառյալ բայց առանց սահմանափակելու, գովազդներ, գների եւ տեխնիկական գնահատման փաստաթղթեր, դիմել ՀՄԿ-ին հավանության համար, եւ վերջնական պայմանագրերը ստորագրելու համար:
- Վերանայի, վերլուծի եւ առաջարկի համապատասխան ՀՄՀ-Հայաստանի պատասխանները կապալառուների կողմից առաջարկված փոփոխությունների վերաբերյալ խնդրագրերը:

Վերահսկողություն կատարելիս ՀՄՀ-Հայաստանի Կառավարման Գրասենյակը պարտավոր է

- ապահովել որ գնումները կատարվեն թափանցիկ, օրինական եւ մասնագիտական պատշաճ մակարդակով, եւ ապահովել հավասար եւ արդարացի վերաբերմունք մատակարարների եւ կապալառուների նկատմամբ:

- Գնահատման Խմբերին ուղղություն տալ իրենց պարտականությունները կատարելու համար:
- Ապահովել Համաձայնագրի, Գնումների Համաձայնագրի եւ Լրացուցիչ Պայմանագրերի շրջանակներում պահանջվող բոլոր գնումների հետ կապված հավանությունները, այդ թվում՝ (i) Գնումների Համաձայնագրի Առդիր 2-ում նշված բոլոր հավանությունները յուրաքանչյուր փուլի համար եւ (ii) Գնումների Գործունեության Ձեռնարկում (ներքեւում սահմանված) նշված բոլոր հավանությունները
- Կանխել Գնումների ընթացքում շահերի բախումները, իրական կամ թվացյալ:
- Կիրառել խիստ վերահսկողություն գաղտնիությունը եւ պարկեշտությունն ապահովելու համար ամբողջ գնումների գործընթացում:
- Պաշտպանել Գնումների գործունեությունը խաբեությունից, վատնումից եւ չարաշահումներից:
- Արագ եւ արդար պատասխանել Գնումների գործունեության հետ կապված գանգատներին:
- Կատարել այլ գործառույթներ եւ պայմանագրային պարտավորություններ, որոնք սովորաբար վերաբերում են Գնումների Գործակալին:

Գնումների Կանոնները, Ընթացակարգերը, Պահանջները եւ Լավագույն Պրակտիկան: Ընդհանուր առմամբ Գնումների գործակալը պարտավոր է.

- Հետել Համաձայնագրի 3.6 Բաժնում նշված Գնումների սկզբունքները (“Գնումների սկզբունքներ”) եւ Գնումների համաձայնագրին, այդ թվում այդ համաձայնագրում նշված Գնումների Ուղեցույցներին (“Գնումների Ուղեցույցներ”), որոնք ներառում են Ծրագրի իրականացման հետ կապված ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռքբերմանը վերաբերող կանոններն ու ընթացակարգերը:
- Օգտագործել հաստատված Գնումների Նախագծում նշված Գնումների մեթոդները, եթե այլ գրավոր համաձայնություն չի կնքվել ՀՄԿ-ի հետ:
- Ապահովել, որ Գնումների Ուղեցույցներով եւ Համաձայնագրի այլ փաստաթղթերով պահանջվող բոլոր անհրաժեշտ դրույթները արտացոլվեն բոլոր Գնումների հետ կապված պայմանագրերում, այդ թվում (1) Համաձայնագրի 2.3 Բաժնում նշված ՀՄԿ-ի ֆինանսավորման օգտագործման սահմանափակումները, (2) Համաձայնագրի 3.8 Բաժնում նշված համապատասխան աուդիտորական եւ տեղեկության եւ փաստաթղթերի մատչելիության ապահովման պահանջները, (3) Համաձայնագրի 3.12 Բաժնում նշված կիրառելի հաշվետվողականության պահանջները, (4) ԱՄՆ-ի օրենքով, ենթաօրենսդրական ակտերով եւ քաղաքականությամբ սահմանված եւ այդ

Արդիր Գ-3

պահին կիրառելի դրույթները արգելված աղբյուրների մասնակցության բացառելու վերաբերյալ, (5) Համաձայնագրում, Հարակից Պայմանագրերում կամ Պայմանագրի հիմնական դրույթների հուշագրով սահմանված ցանկացած այլ դրույթ, որը կիրառելի է այդ ոլորտի պայմանագրի:

- Հետեւել բոլոր ծախսերի փոխհատուցման սկզբունքով կազմված պայմանագրերի համար այդ պահին կիրառելի եւ իրենց փոփոխություններով հանդերձ ՀՄԿ-ի Ծախսերի Չափորոշիչներին (ՀՄԿ-ի Ծախսերի Չափորոշիչներ): ՀՄԿ-ի Ծախսերի Չափորոշիչները, ՀՄՀ-Հայաստանը կտրամադրի Իրագործող Կազմակերպություններին հրապարակման պահից:
- Ապահովել մրցույթների հայտարարություններում սահմանված բոլոր կանոնների եւ ընթացակարգերի խիստ բավարարումը, նամանավանդ առաջարկների գնահատման մեթոդոլոգիայի եւ չափանիշների կիրառման առումով:
- Հետամուտ լինել Պետական Գնումների մասնագիտական ընդունված լավագույն պրակտիկայի իր պարտականությունների կատարման ընթացքում:

Գնումների Գործողությունների Ձեռնարկ եւ Առաջարկների հետ կապված փաստաթղթերը

Գնումների Գործակալը պարտավոր է.

- Մշակել եւ կիրառել գործողությունների ձեռնարկ, որում կսահմանվեն գնումների գործառնությունների իրագործման համապատասխան գործընթացներ, այդ թվում, գնումների հայտարարագրերի ձեւակերպում, գնումների փաստաթղթերի պատրաստում, գնումների կատարումը եւ պայմանագրերի վերահսկումը (“Գնումների Գործողությունների Ձեռնարկ”): Գնումների Գործողությունների Ձեռնարկը ներառում է Գնումների հայտարարությունների եւ հաշվառումների ձեւաթղթերը: Սույն Պայմանագրի ստորագրումից հետո **60** օրյա ժամկետում, Ձեռնարկը պետք է ներկայացվի ՀՄԿ-ի հաստատմանը:
- Մշակել եւ կիրառել մրցութային առաջարկների փաստաթղթերը (“Առաջարկների փաստաթղթեր”) ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռքբերման համար: Սույն փաստաթղթերը պետք է Գնումների Պայմանագրի համաձայն ներկայացվեն ՀՄԿ-ի հաստատմանը:
- Մշակել եւ իրականացնել պաշտոնական ուսուցողական ծրագրեր մրցութային առաջարկների փաստաթղթերը եւ Գնումների Գործողությունների Ձեռնարկը ՀՄՀ-Հայաստանի անձնակազմին, Իրականացնող Կազմակերպություններին եւ

ՀՄՀ-Հայաստանի Գնումների համակարգի հետ առնչվող ծառայությունների մատուցողներին ծանոթացնելու համար:

- Մշակել մրցույթների բողոքարկման համակարգ Գնումների Համաձայնագրի Առդիր 1-ի 5-րդ բաժնի համաձայն:

Գնումների Պլան եւ Ժամանակացույցեր

Գնումների Գործակալը պարտավոր է.

- Մշակել Ծրագրի Գնումների Պլանը, ապահովելով դրա թարմացումը յուրաքանչյուր վեց ամիսը մեկ, այն ներկայացնելով ՀՄԿ-ի վերանայմանը եւ հաստատմանը Գնումների Համաձայնագրի համաձայն: Գնումների Պլանը պետք է ներառի յուրաքանչյուր Գնման վերաբերյալ համառոտ նկարագրություն, ներառյալ Գնման նախատեսված գինը եւ գնման համար կիրառվելիք մեթոդը:
- ՀՄԿ-ի պահանջով փոփոխել Գնումների Պլանը:
- Պատրաստել եւ հրապարակել ծանուցում ՀՄԿ-ի հաստատված յուրաքանչյուր Գնումների Պլանի մասին (“Ընդհանուր Գնման Ծանուցում”), որում կնշվի այդ ժամանակահատվածում նախատեսված գնումների գործողությունները: Սույն Ծանուցումը պետք է պարունակի համառոտ նկարագրություն գնվելիք ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների վերաբերյալ, գնման նախահաշիվը եւ այլ անհրաժեշտ տեղեկություններ մատակարարողների եւ կապալառուների լայն մասնակցությունն ապահովելու համար: Գնումների Գործակալը կապահովի, որ յուրաքանչյուր ընդհանուր Գնումների Ծանուցումը հրապարակվի Գնումների համաձայնագրի համաձայն:
- Գնումների Պլանում նախատեսված գնումների համար պատրաստել հատուկ գնումների իրականացման պլան եւ ժամանակացույց՝ գնման գործընթացը կատարելու համար: Ի հավելումն, Գնումների պլանում նշված տեղեկությունների, այդ իրականացման պլանները եւ ժամանակացույցերը պետք է սահմանեն գնումների գործընթացի քայլերը եւ գործընթացի հիմնական փուլերի ժամանակացույցը: Ըստ պատշաճի Գնման իրականացման պլանը եւ ծրագիրը կարող է սահմանի. (1) Գնման ընթացակարգերը, (2) մրցութային փաստաթղթերի հրապարակման կամ գովազդային մոտեցումը գնման մեթոդին համապատասխան, (3) տեղագնումների եւ նախամրցութային հանդիպումների անցկացման ծրագիրը, (4) պատասխանների ժամկետները, (5) մրցութային առաջարկների բացումը, առաջարկողի որակավորման տվյալների եւ ֆինանսական

Առդիր Գ-5

առաջարկների գնահատման ժամկետները, (6) մրցույթի շահողների հայտարարման, Պայմանագրի կատարման, աշխատանքները սկսելու եւ ավարտելու ժամկետները: Մույն պլանները եւ ժամանակացույցերը պետք է նշեն այն կետերը, որոնք պահանջում են հավանություններ եւ պետք է նախատեսի համապատասխան ժամանակ այդ գործողությունների համար:

Գնումների Գործընթացը

Գնումների Գործակալը վարում է գնումների քննարկումները մատակարարողների, խորհրդատուների եւ կապալառուների ընտրության վերաբերյալ: Կախված Գնման մետոդից, սույն պարտականությունը կատարելիս կարող է:

- Պատրաստել գնումների մասին ծանուցող գովազդներ եւ հրավերներ: Հրապարակել Գնումների Ուղեցույցով պահանջվող գնումների մասին ծանուցումները, ձեռնարկելով համապատասխան գովազդային քայլեր լայն մասնակցություն եւ մրցակցություն ապահովելու համար:
- Մրցույթ հայտարարելուց առաջ ապահովել համակարգված ձեռով պայմանագրի գնի նախահաշվի մշակումը՝ հիմք ընդունելով նախորդող փորձը, պատմական կամ վիճակագրական տվյալները, հրապարակված ցուցանիշները, ինչպես նաեւ պայմանագրի գնի նախահաշվի պատրաստման ողջամիտ եւ հավաստի հիմք տվող այլ աղբյուրներ:
- Ստուգել, որ Գնումների առարկաների տեխնիկական պահանջները, նախագծերը եւ/կամ այլ պայմանագրային պահանջները կամ փաստաթղթերը, բավարար են, որպեսզի կապալառուները կարողանան Օրագրի նպատակները (ինչպես սահմանված է Համաձայնագրում) բավարարելու համար եւ ճշգրտորեն ներկայացնում են ՀՄՀ-Հայաստանի պահանջներին՝ չանհատականացված, անաչառ եւ թափանցիկ ձեռով: Եթե ոչ, ապա Գնումների գործակալը պետք է համապատասխանաբար խմբագրի:
- Այն դեպքում, երբ դիմորդների կարճ ցանկ է հաստատվում մրցույթին մասնակցելու համար, ապահովել, որ նշանակվի որակյալ գնահատման հանձնաժողով, դրան բացատրելով հանձնաժողովի պարտականություններն ու պարտավորությունները եւ երաշխավորելով, որ կարճ ցանկը պատրաստվի արդար եւ անաչառ ձեռով հայտարարված ընթացակարգերով եւ չափանիշներով, ամփոփելով արդյունքները համապատասխան գրավոր զեկույցով:
- Պատրաստել մրցույթի հայտարարությունները, ներառյալ առաջարկի փաստաթղթերը, ապահովելով, որ դրանում պատշաճորեն նշված լինեն

Արդիւր Գ-6

առաջարկ ներկայացնելու ժամկետները, մասնակիցների որակավորման չափանիշները եւ գնահատման ազդեցիկ չափորոշիչներ եւ մեթոդներ:

- Ձեռնարկել անհրաժեշտ տեղազնման կամ առաջարկողների հանդիպումներ Գնման համար:
- Անհապաղ պատասխանել մատակարարողներից եւ կապալառուներից ստացված բոլոր գրավոր հարցումներին կամ հստակեցման խնդրանքներին մրցույթի առաջարկման ընթացքում: Նման պատասխան կամ հստակեցման հետեւանքով էական փոփոխություն առաջանալու դեպքում փոփոխությունը պաշտոնապես ձեւակերպվի մրցույթի առաջարկի փաստաթղթերի հավելվածի տեսքով, համապատասխանաբար տեղեկացնելով բոլոր հնարավոր կապալառուների եւ մատակարարողների մրցութային առաջարկի փաստաթղթերում սահմանված ընթացակարգի համաձայն:
- Ստանալ բոլոր առաջարկները մրցութային առաջարկի փաստաթղթերում սահմանված տեղում, օրը եւ ժամին կիրառելով ընդունված լավագույն պրակտիկան:
- Ուսումնասիրել եւ խորհուրդ տալ գնահատման հանձնաժողովի ձեւավորման մասին ապահովելով, որ որակյալ անդամներ նշանակվեն, նրանց բացատրելով իրենց պարտականությունները եւ ապահովելով որ գնահատման գործընթացը կատարվի հայտարարված չափանիշներին եւ մեթոդներին համապատասխան, որոշումներ կայացնի առաջարկների ընդունման կամ թերի առաջարկների մերժման մասին եւ գրավոր զեկուցելով դրանց մասին:
- Ստանալ գնահատման հանձնաժողովից շահողի մասին հանձնարարական եւ ստուգել, որ հանձնարարական ստացած մատակարարողը կամ կապալառուն համապատասխանում են պայմանագրով նախատեսված մասնագիտական պահանջներին եւ իրավասու է կնքելու ՀՄԿ-ի կողմից ֆինանսավորված պայմանագիրը:
- Պատրաստել եւ ստորագրել վերջնական պայմանագիրը մրցույթը շահած մատակարարողի կամ կապալառուի հետ նշված ժամկետներում՝ պահանջելով մրցույթի առաջարկի փաստաթղթերում սահմանված եւ մատակարարողի կամ կապալառուի առաջարկված երաշխավորությունը:
- Տեղեկացնել մրցույթը չհաղթած մատակարարողներին կամ կապալառուներին մրցույթի արդյունքների մասին, վարելով հանդիպումներ նրանց խնդրանքով եւ արձակելով վերջիններիս իրենց կողմից տրված երաշխավորությունները:
- Գնումների Ուղեցույցների համաձայն հրապարակել մրցույթի արդյունքով կնքված պայմանագրերը:

Արդիւր Գ-7

Պայմանագրի կառավարումը

Գնումների Գործակալը պարտավոր է.

- Կառավարել պայմանագրի կատարման ընթացքում առաջացած հարցերը, ինչպիսիք են հիմնական մասնագետների կամ առաջադրանքի փոփոխությունը:
- Հաստատել պայմանագրի կառավարման համակարգ (i) մատակարարի եւ կապալառուի պայմանագրի պահանջները ապահովելու եւ վերահսկելու համար, (ii) ձեռնարկել համապատասխան քայլեր պայմանագրի կատարման ուշացումների դեպքում, (iii) ապրանքների ստացման, աշխատանքների կատարման եւ ծառայությունների մատուցման մասին հավաստագրեր տալու մասին:
- Ապահովել, որ մինչեւ ապրանքների ընդունումը, ստուգման պատշաճ համակարգի առկայությունը:
- Ապահովել կատարված ծառայությունների եւ ստացված ապրանքների որակը ստուգելու եւ վերահսկելու պատշաճ համակարգի առկայությունը:
- Կառավարել եւ կիրառել ծառայությունների, աշխատանքների եւ ապրանքների մերժման, թերությունների վերացման, երաշխավորությունների բավարարման եւ մատուցման եւ կատարման ուշացումների հետեւանքների վերացման ընթացակարգեր:
- Պատրաստել, կառավարել եւ կիրառել առաջադրանքի եւ գնումների պայմանագրերի փոփոխությունները:
- Կառավարել եւ կիրառել գնումների պայմանագրերի դադարեցումը:
- Կառավարել եւ աջակցել պայմանագրային վեճերի լուծմանը:

Բողոքներ

Գնումների գործակալը պետք է կապալառուների եւ հնարավոր մատակարարողների կողմից ներկայացված գնումների գործընթացի հետ կապված բողոքները կառավարի եւ աջակցի դրանց հետ կապված վեճերի լուծմանը, պայմանով սակայն, որ մրցութային առաջարկների եւ պայմանագրերի կառավարման հետ կապված բողոքների եւ գանգատների ընթացք տալու համակարգը սահմանվի Գնումների

Արդիւր Գ-8

Համաձայնագրում, մրցութային առաջարկների բողոքարկման համակարգում եւ լրացուցիչ ընթացակարգերում:

Զեկույցներ եւ տեղեկատվության Հրապարակայնություն

Գնումների Գործակալը պարտավոր է.

- Ամեն ամիս պատրաստել զեկույց նկարագրելով Գնումների գործակալի կողմից նախորդ ամսվա ընթացքում կատարված հիմնական գործերի մասին:
- Եռամսյակը մեկ պատրաստել զեկույց նախորդ եռամսյակի ընթացքում իր կատարած գործերի մասին: